

# ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԵՃՏՈՆԵԿԱՆ ԵՐԿԱՄԱԹԵՐԻՐ  
ԳԵՆԵՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ



**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : [prelacy@armenianprelacy.ca](mailto:prelacy@armenianprelacy.ca)

Site web : [www.armenianprelacy.ca](http://www.armenianprelacy.ca)

*La revue est disponible en téléchargement sur le site.*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՆ ԱՐՔ. ՆԵՐՍՈՅԵԱՆ ԵՒ ԻՐ  
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Գառնիկ ք. Գ.

ԼՈՅՄ ԱԹԽԱՐՀԻՆ

Զարեհ Եպս. Ազնաւորեան

ԲԱՐՈՒ ԵՒ ԶԱՐԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱՌԻ ՈՒ  
ԴՐԱԽՏԻ ԳԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Յակոբ Արք. Գլնճեան

ՀՐԱԾՔԸ

Հ. Եփրեմ Տէր Ղազարեան

ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՀԻ

Տանիա Օհանեան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Խորէն Ա. Քհնյ. Ներսէսեան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ

Վահան Քհնյ. Կոստանեան

ՃԾՄԱՐԻՏ ԱՂՕԹԱՍԱՅԸ

Սեպուհ Արք. Սարգիսեան

# ՏԻՐԱՆ ԱՐՔ. ՆԵՐՍՈՅԱՆ ԵՆ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

## ԿԵՆՍԱՆՇՈՒՄ ՄԸ:

Տիրան արք. Ներսոյեան՝ աւագանի անունով Ներսէս Թաւուքճեան, ծնած է 23 Օգոստոս 1904-ին, Այնթապ: Հայրը՝ Տ. Ներսէս Քհնյ. Թաւուքճեան, իսկ մայրը՝ Աննիճա Այնթապի Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի տնօրէնուհի: Յեղասպանութեան օրերուն իր աքսորական ծնողքին հետ Հալէպ կը հասնի: 1919-ին ծնողքին հետ կը դառնայ Այնթապ:

1921-ին փոքրիկն Ներսէս Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանք կը դրկուի: 1926-ին սարկաւազ կը ձեռնադրուի: 1928-ին քահանայական օծում կը ստանայ եւ կուսակրօնութեան ուխտ կ'ընէ: Յետ օծման, ուսանելու համար Լոնտոն կը դրկուի եւ կը յաճախէ Մըրֆիլս եւ Գինկ կաճառները: 1930-ին կը դառնայ Երուսաղէմ եւ դպրեմանքին մէջ դասապահեր կը ստանձնէ: Իր նիւթերը կ'ըլլան գրաբար, վաղ եկեղեցւոյ պատմութիւն եւ վարդապետական ու հոգեւոր աստուածաբանութիւն: 1931-ին կը նշանակուի խմբագիր պատրիարքութեան պաշտօնաթերթին՝ «Սիրոն»ի: 1932-ին կը կարգուի տեսուչ եւ զայն կը վարէ մինչեւ 1937: 1938-ին կ'ըլլայ հովիւ Փարիզի հայոց, ուր «Մեր Տունը» անուն պարբերականը կը հրատարակէ: 1939-ին կ'ըլլայ հովիւ Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ ծուխին: 1943-ին կ'ընտրուի Առաջնորդ Ամերիկայի եւ կը յաջորդէ Գարեգին Արք. Յովսէփեանին, որ ընտրուած էր կաթողիկոս Կիլիկիոյ Ս. Աթոռին: 1944-ին, նախքան Ամերիկայէն իր մեկնելը, Գարեգին արքեպիսկոպոս իրեն ծայրագոյն վարդապետի աստիճան կու տայ: Յաջորդ տարի Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանայ Ս. Էջմիածնի մէջ: 1953-ին կ'արժանանայ արքեպիսկոպոսութեան պատիւին: 1955-ին կ'ընտրուի Երուսաղէմի Աթոռին պատրիարք: Տխուր հաշիւներ՝ 1958-ին զինք բռնի եւ անվերադարձօրէն կը հեռացնեն Առաքելական Աթոռէն: Կը հաստատուի Միացեալ Նահանգներ: 1960-ին, ամերիկայի համար հոգեւորականներ պատրաստելու հեռանկարով եւ օրուայ թեմակալ առաջնորդին՝ Տ. Սիրոն արք. Մանուկեանի հովանաւորութեամբ սկիզբ կը դնէ Ս. Ներսէս Շնորհալի հոգեւոր ձեմարանին: Եւ մինչեւ իր վախճանումը՝ ինքզինք կը նուիրէ հոգեւոր ձեմարանին եւ մտաւորական գործունէութեան: Կը վախճանի 1989-ին: Մարմինը առժամաբար կ'ամփոփուի Նիւ Եորքի շրջանի գերեզմանատան մէջ: Իսկ երկու տարի ետք, զայն կը փոխադրեն Երուսաղէմ եւ Ս. Փրկիչ վանքի գերեզմանատան մէջ՝ պատրիարքներու շիրմաներու շարքին կը թաղեն:

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿ:

Ա.- A Christian Approach To Communism / Ideological Similarities Between Dialectical Materialism And Christian Philosophy, London, 1942.

Ներսոյեան Վարդապետ նախաբանով բացատրած է, թէ գրքոյկը ջատա-գովական փորձ մըն է, կարենալ դիմագրաւելու համար Համայնավարութեան մարտահրաւէրը:

Գիրքը երկու բաժին ունի: Առաջինով Վարդապետը խօսած է սովետական համայնավար ուժերին վերաբերող վիճայարոյց խնդիրներու վրայ եւ փորձած յստակացնել գետինը՝ համայնավարութեան հետ «գաղափարաբանական կարե-լի մերձեցումի մը համար»: Երկրորդ բաժինը, որ գլխաւորն է, կը պարունակէ Մարքսեան վարդապետութեան իմաստասիրական գլխաւոր դրոյթներուն հա-մառօտ քննութիւն մը եւ ցուցադրում մը՝ Տրամախոհական Նիւթապաշտու-թեան եւ Քրիստոնէական իմաստասիրութեան հասարակաց գետնին:

Ներսոյեան Վարդապետին կարծիքով, սովետական համայնավարութիւնը մարքսեան վարդապետութեան կիրարկումն է: Ան խորհած է, թէ անհրաժեշտ է լուրջի առնել զանիկա, որովհետեւ զայն տեսած է իբր արդի ժամանակներու երկու մեծ խնդիրները (անհատական բարօրութիւնը եւ ազգային կեանքի հա-մամարդկային սիրով զարգացումը) լուծելու խոստմնալից փորձ մը:

Կ'ափսոսայ Վարդապետը, սակայն, որ սովետական համայնավարու-թիւնը կը խոստովանի՝ թէ՛ տեսականօրէն եւ թէ՛ գործնականօրէն հակառա-կորդը ըլլալ ամէն կրօնքի եւ յատկապէս՝ քրիստոնէութեան: Անիկա գիտու-թեան վրայ դրած ըլլալով իր վստահութիւնը եւ կարծելով, թէ կրօնքը հակա-գիտական է՝ կը հալածէ զայն:

Անաստուածութիւնը մարքսեան վարդապետութեան գլխաւոր յատկա-նիշներէն մէկն է: Անոր կրթական ամբողջ համակարգը կը ճգնի կրօնքը մէկ կողմ շարտել:

Այս անհաւատութիւնը դիմակալելու երկու մեթոտ տեսած է Ներսոյեան Վարդապետ:

Կա՛մ

լայն ճակատի վրայ՝ տարածուն յարձակողական մը, զոր սակայն վատ մարտավարութիւն համարած է եւ ուստի յայտնած անոր դատապարտուած ըլլալը ձախողութեան:

Կամ՝

համարձակ հասկացողութիւն, համակրանք, եւ անկեղծ գնահատանք այն ամէն ինչին՝ որ հակառակորդին մօտ բարի է. եւ աշխատանք՝ հակառա-կորդին հետ կարելի հաշտեցման հեռանկարով: «Ասիկա էապէս քրիստոնէա-կան մարտավարութիւն է», գրած է ան:

Արդ, ամբողջ մնացեալ բաժինը քննադատական փորձ մըն է «համար-ձակ հասկացողութիւն»ի, «համակրանք»ի եւ «անկեղծ գնահատանք»ի:

Շարք մը Ներսոյեան Վարդապետի սովետական համայնավարութեան մէջ տեսած «բարի» երևոյթներէն.

1.- Եթէ եկեղեցին ընկերային կեանքի մոտէլ մըն է եւ եթէ նաեւ նախատիպն է երկրի վրայ Աստուծոյ Արքայութեան, ապա ընկերային կեանքի համայնավար կերպը՝ քրիստոնէական իտէալին տանող ճանապարհին լաւագոյն հանգրուանն է:

2.- Քրիստոնէական կեցուածքը սեփականութիւններու եւ սեփականացումներու նկատմամբ՝ կատարելապէս համաձայն է համայնավար կեցուածքին:

3.- Համայնավարութիւնը պայքար է ընկերային դասակարգերու ջնջման: Դրամատիրական առումով դասակարգերու գոյութիւնը անսազելի է քրիստոնէական ընկերային իտէալին եւս:

4.- Համայնավարութիւնը քրիստոնէութեան հօր մրցակից մըն է: Անոր մեթոտը նիւթական տիեզերքին վերաբերեալ եւ այս աշխարհի իրերուն՝ տրամաբանական է եւ ազդեցիկ: Քրիստոնէական իմաստասիրութիւնը կարող է պատշաճելու համայնավարութեան հաւատացած ճշմարտութեան:

Արդ, ըստ Ներսոյեան Սրբազանի, ամէն ինչ որ Տրամախոհական Նիւթապաշտութիւնը տուած է՝ աշխարհի ճշմարիտ ընկալման համար օտար չէ, եւ կայ քրիստոնէական իմաստասիրութեան մէջ: Ուստի քրիստոնէութիւնը աւելին ունի քան Տրամախոհական Նիւթապաշտութիւնը: Քրիստոնէական իմաստասիրութիւնը չի հերքեր մարքսականութիւնը, սակայն անկէ աւելին է, որովհետեւ Աւետարանը «կեանք է եւ կեանք է առատապէս»:

Բ.- Armenian Church Historical Studies / Matters of Doctrine and Administration, New York, 1996:

Հատորին խմբագրիւմ՝ Ներսէս Վրէժ Ներսէսեան նախաբանով մը կը տեղեկացնէ, թէ Տիրան արք. Ներսոյեանի յօդուածները ընդգրկող գրքի մը գաղափարը 1979-ին ունեցած է: Եւ Տիրան Սրբազան 17 Մարտ 1979-ին նամակով մը վերատեսութեան ենթարկած է իրեն ներկայացուած բովանդակութիւնը եւ ուսումնասիրութիւններու կարգը հատորին: Խմբագրի առաջարկած ցանկին աւելցուցած է անտիպ ուսումնասիրութիւն մը, որուն տիտղոսն է «Saint Nerses of Klla ("The Graceful")»: 8 Ապրիլ 1980-ին գրուած նամակով մը Սրբազանը յայտնած է փափաքը գիրքը կոչելու այն անունով, որ հատորին տիտղոսն է: Սակայն նշած է նաեւ, թէ գուցէ իր գրութիւնները կարելի է «փորձեր» կոչել քան՝ ուսումնասիրութիւններ (studies): Բայց խորհելով, թէ «փորձ»ը սահմանուած է իբր «գրական շարադրութիւն» ("literary composition"), նախընտրած է «ուսումնասիրութիւն» եզրը գործածել:

Նախաբանին յաջորդած է խմբագրին գրչով ներածութիւն մը, որ վերնագրուած է՝ «Հայ Աստուածաբանութեան Թեմաները Եւ Մտահոգութիւնները 20-րդ դարու Առաջին Կէսին Մէջ» ("The Themes and Concerns of Armenian Theology in the Early Half of the Twentieth Century"):

Ներածութեան էջ 22-46-ը ('History, Christ and Faith : The Theology of

Archbishop Tiran Nersoyan”) *Համառոտ մեկնաբանութիւն մըն են Տիրան Արքեպանի աստուածաբանութեան:*

*Գիրքը հինգ մասեր ունի:*

*Առաջինը՝ եկեղեցապատմական է եւ ունի հետեւեալ նիւթերը. ա, The Apostolic Foundation of the Armenian Church. բ, Summary Topics of Armenian Church History. գ, The Armenian Church Since the First World War. դ, The Paulicians. ե, The Armenian Cathedral of St James in Jerusalem:*

*Երկրորդը՝ քրիստոսաբանական է եւ ունի հետեւեալ նիւթերը. ա, The Christological Position of the Armenian Church. բ, The Lesson of History on the Controversy Concerning the Nature of Christ. գ, Problems of Consensus in Christology: The Function of Councils:*

*Երրորդը՝ կանոնադրական է եւ ունի հետեւեալ նիւթերը. ա, A Brief Outline of the Armenian Liber Canonum and its Status in Modern Times. բ, Problems and Exercise of Primacy in the Armenian Church. գ, Laity in the Administration of the Armenian Church. դ, The Administration and Governing Authority of the Armenian Church. ե, Notes on the Marriage and Celibacy of Priests:*

*Չորրորդը՝ Պաշտամունքային է եւ ունի հետեւեալ նիւթերը. ա, The Bible in the Armenian Church. բ, The Structure of the Canonical Hours of the Armenian Church. գ, A Brief Commentary on the Divine Liturgy of the Armenian Apostolic Church:*

*Հինգերորդ մասը խմբագիրը ինք գրած է: Անիկա Տիրան Արքեպանի կեանքին եւ գրութիւններուն յատկացուած է:*

## **ՎԵՐՋԱԲԱՆ:**

*Տիրան արք. Ներսոյեան 20-րդ դարու մեր եկեղեցականութեան սակաւաթիւ աստուածաբաններէն մէկը եղաւ: Իր աստուածաբանական մտածողութիւնը յառաջադէմ ու համարձակ քայլ մըն էր արդի պահանջներու եւ ոգիի սահմանին վրայ:*

*Այստեղ կ'ուզեմ արձանագրել Վիգէն Կիւրոյեանի հետեւեալ վկայութիւնը (զայն կու տամ թարգմանաբար).*

*«Հայ եւ միջ-եկեղեցական շրջանակներու մէջ, Տիրան արք. Ներսոյեան Հայ եկեղեցոյ մեծագոյն փաստաբանը եւ պաշտպանն էր, ու միաժամանակ՝ անոր խստագոյն քննադատը: Ան այս լարումը ապրեցաւ բացարձակ սաստկութեամբ եւ համոզումով»:*

*Ներսոյեան արքեպանի աստուածաբանական մտքին համապարփակ վերլուծման համար՝ մեծ բարիք պիտի ըլլայ իր հայագիր յօդուածներուն մէկտեղումը հատորի մը տան մէջ:*

ԳԱՌՆԻԿ Ք. Գ.

«20րդ Դար/ Աստուածաբանութեան Սեմին Համար (Դէմքեր եւ Գործեր)»

անտիպ գիրքէն:

# ԼՈՅՄ՝ ԱՇԽԱՐՀԻՆ

«Դո՛ւմ էմ աշխարհի Լոյսը» – Մատթ.Ե.14:

Քրիստոս իր եկեղեցիին վստահեցաւ աւետարանչութեան պաշտօնը, որ կ'ընդգրկէ անոր գործունէութեան բոլոր երեսները անխտիր: Ասոնք յաւերժական ճառագայթումն ըլլալու են Յիսուսի անձին ու գործին՝ աշխարհի կեանքին մէջ, մարդկութեան փրկութեան սահմանուած: Այս առաքելութիւնը կը կոչուի նաեւ լուսաւորում, որովհետեւ Քրիստոս, որ աշխարհի լոյսն էր (Յովհ. Ը 12), մարդկային մարմին առաւ՝ որպէսզի իրեն հաւատացողը խաւարին մէջ չմնայ (Յովհ. ԺԲ. 46), այլ լոյսի որդի դառնայ (Յովհ. ԺԲ. 36), եւ ի վերջոյ՝ Փրկչին օրինակով ըլլայ լոյս՝ աշխարհին (Մատթ. Ե. 14):

Աշխարհին լոյս ըլլալու, այսինքն մարդիկը Քրիստոսի խօսքով լուսաւորելու այս առաքելութիւնը կ'իրագործուի երկու մակարդակի վրայ: Առաջին՝ Եկեղեցիին միջոցաւ, զայն նկատի առնելով իբր առաջնորդող ու վարդապետող ամբողջութիւն. եւ երկրորդ՝ իւրաքանչիւր հաւատացեալի կողմէ, որպէս անհատանկի մէկ անդամը Յիսուսի Մարմինին:

Աւետարանի քարոզութիւնը առաջնահերթ պարտաւորութիւնն է Եկեղեցիին: Ա. դարուն, երբ հաւատացեալները շատցան եւ առաքեալները այլեւս ի վիճակի չէին եկեղեցւոյ բոլոր կարիքներուն հասնելու, կանչեցին բոլոր Քրիստոսի հետեւորդները եւ ըսին. «Մենք չենք ուզեր Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգել եւ ուտելիք մատակարարելով զբաղիլ: Հետեւաբար, եղբայրներ, ձեր կողմէ վկայուած իօթը հոգիներ ընտրեցէ՛ք, որոնք Ս. Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան. զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք, իսկ մենք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարութեան նուիրուինք» – Գործք. Զ. 1-4: Այդպէս ալ եղաւ, եւ առաքեալները՝ աւետարանչութիւնը իրենց վրայ դրուած անյետաձգելի «հարկ» համարելով՝ զացին իրենց վկայութեան ճամբով Աստուծոյ գիտութիւնն ու սէրը ճառագայթելու աշխարհի մութ անկիւններուն, իրենց ներսիդին վառած ունենալով Քրիստոսի կեանքին ու փրկարար շնորհքին կրակը: Այդ նոյն ճառագայթող ջահը բարձր պահեց Եկեղեցիին իր ընդհանրութեան մէջ, ինչպէս նաեւ բոլոր տեղական համայնքները: Ասոնք առաքելական ավանդութեան ժառանգորդը եղան՝ ոչ թէ կրաւորական ձեւով, միայն ստացողի դերով ու հասկացողութեամբ, այլ մանաւանդ՝ զայն իբրեւ աստուածաւանդ քանքար իրենց հաւատքի կեանքին մէջ բազմարդիւն կիրպով եւ առաւելագոյն չափով շահարկելէ ետք, անոր կենդանի փոխանցողը դարձան եկեղեցւոյ նորածնունդ սերունդներուն:

Հայ Եկեղեցին, Ս. Թադէոս եւ Ս. Բարթոլղիմէոս Առաքեալներէն ստացած Աստուծոյ խօսքին ավանդով՝ Հայրենի մեր աշխարհին մէջ պատրաստեց քրիստոնէական հաւատքի առաջին հունձքը, եւ անկէ Աստուծոյ ընծայեց նահատակներու եւ հաւատարիմ վկաներու երախայրիքը: Անով էր որ, ըստ

պատմիչին, աւետարանին մատակարարման նուիրուած վարդապետները ամպերու նմանութեամբ, գիշեր ցերեկ քարոզութեան յորդահեղ անձրեւը կը թափէին մեր ժողովուրդին վրայ (Փաւստոս Բիւզանդ, Գ. դար., գլ. ԺԳ): Այս կերպով՝ հաւատքի լոյսը Հայաստանէն ճառագայթեց դէպի Ադուանք ու Վրաստան, եւ հեռահաս ճիգով բոցկլտաց, հասնելու համար Հոններուն ու Խազարներուն, Մոնկոլին ու Թաթարին: Քրիստոնէական լոյս-հաւատքը գիտակցական կեանքը եղաւ մեր հայրերուն, անոնց հոգիներուն հետ խառնուած ու զանգուած. գո՛յնը եղաւ իրենց մորթին, էութիւ՛նը իրենց եսին, որուն իբրեւ պաշտպանութիւն եւ յարակալ արիւնագիր դաւանութիւն՝ սրտայօժար ընծայումով իրենց ամբողջ կեանքը տուին:

Այսօր եւս Եկեղեցին՝ անցեալի աւանդութեան ու ժառանգին կրաւորական ստացողը չէ պարզապէս: Ան քրիստոնէական հաւատքին կանչուած, անոր շուրջ խմբուած եւ անով ապրող համայնքն է. բայց զայն միայն իր սրտին ու մտքին մէջ խոստովանող, եւ հոն ծածուկ պահող ու բանտող մարմինը չէ: Եկեղեցին նաեւ ակնառոյց յոյսով փրկութեան միտող համայնքն է, կեանքով եւ մանաւանդ «առաւել կեանք»ով եռուն: Ան ձեռնածակ կերպով չի սպասեր, հապա գործօ՛ն մարմին է, վկայո՛ղ հաւաքականութիւն: Ու մե՛նք ենք անոր անդամները, Աստուծոյ փրկութեան յաւիտենական ծրագրին հաղորդ եւ զայն աշխարհի վրայ յառաջացնելու եւ իրագործելու սահմանուած. այլ խօսքով, աստուածային գործին մարդկային ձեռքերը:

Մքանչելի կոչում մըն է ասիկա, որ իր հետ կը բերէ հարկ մը՝ բոլորիս վրայ դրուած: Պետրոս Առաքեալ հետեւեալ ձեւով կը սահմանէ այդ պարտքը. «Դուք ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նորագգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց» – Ա. Պետ. Բ. 9: Ասիկա բնական արտայայտութիւնն է հաւատքին. «Կը հաւատանք, եւ ատոր համար ալ կը խօսինք» – Բ. Կորնթ. Դ. 13: Հաւատքը եթէ չխոստովանուի եւ կեանքով չարտայայտուի, հողէն դուրս մնացած ցորենահատիկին պէս կրնայ կենալ առանձին եւ անպտուղ: Մինչդեռ ճշմարիտ հաւատքը լոյս է, ճրագ է, զոր վառողը գրուանի տակ չի դներ՝ այլ աշտանակի վրայ, որպէսզի լոյս տայ իր շրջապատին (տե՛ս Մատթ. Ե. 15): Արդարեւ, հաւատքը կրնայ ճառագայթել մեր մէջ: Բայց ատիկա չի բաւեր. պէտք չէ՛ զայն մեր մէջ ծածկենք ու բանտենք: Ընդհակառակը, հայելիի մը պէս արտացոլացնելու ենք Աստուծմէ ինկած այդ շողը, որ ան լուսաւորէ մեր շրջապատը:

Եկեղեցին, իբրեւ ընդհանրական եւ սուրբ մարմինը՝ Քրիստոսի, կազմուած է մեզմով, այսինքն հաւատացեալ անդամներէ՝ որոնք իբրեւ «կենդանի քարեր» կը մտնեն անոր հոգեւոր կառոյցին մէջ (Ա. Պետ. Բ. 5): Աստուածային ճշմարտութեան դիմաց խուլ եւ զայն լռեցնել փորձող աշխարհին առջեւ՝ անոնք պիտի ըլլան Քրիստոսի աւետարանին բարձրաձայն աղաղակող եւ խոստովանող քարերը (տե՛ս Ղուկ. ԺԹ. 40): Այս կերպով է որ՝ երկնառաք Վարդապետին սահմանումով՝ անոնք պիտի ըլլան «աշխարհի լոյսը» (Մատթ.

Ե. 14): Աստուած այսքա՛ն պատիւ եւ վստահութիւն կապած է մեզի, իրեն հաւատացող իւրաքանչիւր անհատի: Մեզ բարձրացուցած է իր շնորհքներու աշտանակին վրայ, որպէսզի լուսաւորենք մեր շրջապատը: Անշուշտ մենք լոյս չենք ինքնին: Երբ հաւատքի ճամբով կը միանանք Քրիստոսի, անոր՝ որ Լոյս էն (Հօր Աստուծմէ) ծնած Լո՛յսն է, այդ պահէն սկսեալ այլեւս պէտք է «լոյսի որդիներու պէս քայլենք» (Եփես. Ե. 8, Ա. Թես. Ե. 5): Սակայն ի՞նչպէս:

Ա.— ԼՈՅՍԻՆ ԴԵՐԸ ՆԱԽ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՍՓՈՒՆԵԼ Է: Լոյսը ճշմարտութեան ծանօթութիւնն է, որ մարդիկը դուրս կը բերէ իրենց հոգիի թափառումներէն ու մտքի խարխափումներէն, եւ դէմ առ դէմ կը դնէ Աստուծոյ իրականութեան հետ, որ իրմով կը բացատրէ ու կ'իմաստաւորէ մարդկային գոյութիւնը: Այս լոյս-գիտութիւնը Յիսուս ինքն է, որ՝ Յովհաննէս Աւետարանիչի բացատրութեամբ՝ այն «ձշմարիտ լոյսն է, որ՝ աշխարհ պիտի դար եւ բոլոր մարդիկը լուսաւորէր» – Յովհ. Ա. 9: Ան միաժամանակ Տէրոջը խօսքն է՝ իբր աստուածային յայտնութիւն, իմաստութիւն, կամք եւ փրկութիւն, տրուած մարդոց՝ դարձեալ Քրիստոսով, որ Աստուծոյ խօսքն է, մարմին առնող Բանը: Այդ խօսքը իբրեւ լոյս կը թափանցէ մեր ներքին աշխարհը, զայն կը խուզարկէ ու կը յայտնէ մեր ներքին մարդը իր հարազատ պատկերով (տե՛ս Եբբ. Դ. 12–13), նաեւ ան կը յանդիմանէ մեր մէջ խաւարին գործերը, ու մեղքով փակուած մեր աչքերը բանալով՝ կ'արթնցնէ մեզ մահուան քունէն, դո՛ւրս կը բերէ մեր մեռելութենէն եւ Քրիստոսի յոյսով կը լուսաւորէ (Եփես. Ե. 13–14):

Բ.— ԼՈՅՍԸ ՆՄԱՆԱՊԷՍ ԿԵԱՆՔ ԿԸ ՊԱՐԳԵԻՒՅ: Աստուծոյ Խօսքը՝ մարդը իր մեռելային քունէն արթնցնելով լուսաւորելէ ետք՝ զայն կը կենսաւորէ: Առանց լոյսի չկա՛յ կեանք: Քրիստոս ըսաւ թէ ով որ կ'առնէ ու կը պահէ իր խօսքերը՝ յաւիտեանական կեանք կը ստանայ (Յովհ. Զ. 64): Անոնք ծննդեան կամ վերածննդեան ոյժ ունին՝ Ս. Հոգիին նորոգութեամբ, եւ ոչ թէ դիրին հնութեամբ (Հռովմ. Է. 6): Ան կ'աճեցնէ ու պտղաբեր կը դարձնէ մարդիկը՝ Աստուծոյ շնորհքին հաղորդ դարձնելով (Կող. Ա. 6), եւ յաւիտեանական կեանքի հունձքը կու տայ իրմով սերմանուած հոգիներուն (Գաղ. Զ. 8):

Գ.— ԼՈՅՍԻՆ ՊԱՇՏՕՆԸ ԶԵՐՄԱՅՆԵԼ Է: Լոյսը կեանք է՝ իր պարզեւած ջերմութեամբ: Արդարեւ, ցրտութիւնը համազօր է մահուան. այնտեղ ամէն ինչ կը սառի, կանգ կ'առնէ, կը դադրի: Մինչ ջերմութեան հետ սկիզբ կ'առնէ շարժումը, աշխուժութիւնը, կեանքը: Նիւթական մարմիններուն կիրարկելի այս ճշմարտութիւնը ի գորու է նաեւ հոգեկան աշխարհին համար: Յուրտ հոգին մեռելութեան կը դիմէ, մինչ տաք կեանքով լեցուն է: Իսկ հոգիին ջերմութիւնը չի դար տեսանելի արեւէն, այլ Միրո՛յ Արեգակէն՝ Աստուծմէ: Անոր սէրը ջերմացնող ճառագայթի պէս կը թափանցէ մեր ներսիդին. իր խօսքերը այրող կրակի պէս կը հրդեհեն մեր հոգիները եւ մարդկային աշխարհը (տե՛ս Ղուկ. Ի. 7. 32 եւ ԺԲ. 49), եւ շնորհքները կրակէ լեզուներու նման կը բորբոքին մեր սրտերուն ու մտքերուն մէջ (Գործք. Բ. 3), մղելով մեզ՝ որ անդադար բերանով պատմենք սէրը, մեծութիւնը եւ սքանչելի գործերը Անոր, որ մեզ

խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց:

Դ. — ԼՈՅՍԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՒ ՈՒՐԱԽԱՅՆԵԼ Է: Լոյսը ուրախութիւն է: Պայծառութիւնն է ան, յստակութիւնը, ուրկէ կասկածի ստուերները կը փարատին, անորոշութեան շուքերը կը նահանջեն, հորիզոնները լոյս կը հագնին եւ կարծէք կը սկսի մնայուն արշալոյս մը, ուր մարդուն սիրտը կը լեցուի անհուն երանութեամբ: Այդ լոյսին ու պայծառութեան ուրախութիւնն է որ Քրիստոսի աւետարանը կը բերէ մարդոց: Ա՛յդ է պատճառը որ փրկագործական պատմութեան կու տանք ԱԻԵՏԱՐԱՆ անունը, որ կը նշանակէ աւետիսը՝ այսինքն բարի եւ ուրախ լուրը պարունակող պատգամ կամ գիրք. իսկ աւետարանելուն իմաստը՝ աւետիլ է, ուրախ լուրը փոխանցել: Հետեւաբար, Աւետարանը քարոզել՝ կը նշանակէ Քրիստոսով եղած լուսաւորութեան ու փրկութեան ուրախութիւնը սփռել ամբողջ աշխարհին: Իսկական աւետարանչութիւնը՝ ի պաշտօնէ կատարուած քարոզութիւնը չէ, հապա առօրեայ սովորական կեանքին ու գործին ընդմէջէն՝ մեր շրջապատին ԼՈՅՍ ԸՂԱՅԻՆ Է: Իսկ մենք լոյսի որդիներու պէս կը քալենք եւ մեր շուրջիները կը լուսաւորենք՝ երբ

— Քրիստոսէ ստացած մեր հաւատքը կ'ապրինք անկեղծօրէն, ամբողջական վստահութեամբ Աստուծոյ վրայ.

— Տէրոջը լոյսով մեր մէջէն կը վանենք մեղքի ապականութեան վարակը եւ մեռելութիւնը.

— Վերանորոգուած ինքնութեամբ կ'ապրինք յաւիտենական կեանքի ծիրը մեր հոգիներուն մէջ:

— Այդ նոր կեանքը եւ անոր լոյսը մեր կենցաղին մէջ կը թարգմանուին Աստուծոյ լոյսին ու սիրոյն ջերմութեամբը եւ ուրախութեամբը, զորս մարդոց կը փոխանցենք՝ անոնց կեանքերն ալ քաղցրացնելու համար:

Այն ատեն արդէն մեր կեանքերը ինքնի՛ն կը խօսին, առանց մեր շրթներու բացուելուն իսկ, եւ կ'աւետարանեն, կը պատմեն Աստուծոյ փրկութեան մեծագործ զօրութեան եւ Ս. Հոգիի ներկայութեան ու ճառագայթող շնորհներու մասին: Ուրեմն «Եկէ՛ք Տէրոջը լոյսով քալենք» – Եսայ. Բ. 5: Որովհետեւ՝ ճիշդ է որ քա՛ղցր է արձագանգ ըլլալ Աստուծոյ ձայնին, փողահարը՝ իր կոչին, բարձրաբարբառ կանչը իր խօսքին. բայց քաղցրագո՛յն է ճառագայթը՝ զառնալ իր լոյսին, եւ անբիծ կեանքով ու գործով զայն շողարձակել հեռո՛ւ, հեռո՛ւ, մինչեւ ծագերն աշխարհի:

ԶԱՐԵՀ ԵՊՍ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

# ԲԱՐՈՒ ԵՒ ՉԱՐԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱՌԻ ՈՒ ԴՐԱԽՏԻ ԳԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԾԱՆՈՒԹՅՈՒՆ Բ 8-15)

- 8 Այնուհետև Տէրը՝ Աստուած արեւելեան կողմը, Եդէմում, մի պարտէզ տնկեց եւ այնտեղ գետեղեց մարդուն, որին ինքը կազմել էր:
- 9 Եւ Տէրը՝ Աստուած թողեց, որ գետնից ամէն տեսակ ծաներ բուսնեն՝ հրապուրիչ տեսքով եւ համեղ ճաշակով, իսկ պարտէզի կենտրոնում էլ բուսցրեց կենաց ծառն ու բարու եւ չարի գիտութեան ծառը:
- 10 Մի գետ էր բխում Եդէմից՝ ոռոգելու համար պարտէզը եւ այդտեղից էլ բաժանում էր չորս նիւղերի<sup>(1)</sup>:
- 11 Մէկի անունը Փիշուն էր. սա այն է, որ հոսում է ամբողջ Խաւիլա երկրի միջով, ուր ոսկի կայ:
- 12 Այդ երկրի ոսկին ընտիր է. այնտեղ գտնուում են նաեւ սուտակ եւ շոհամ<sup>(2)</sup> կոչուող թանկագին քարերը:
- 13 Երկրորդ գետի անունը Գիխոն էր. սա այն է, որ հոսում է ամբողջ Քուշ երկրի միջով:
- 14 Երրորդ գետի անունը Խիդդէկէլ (Տիգրիս) էր. սա այն է, որ անցնում է Ասորեստանի արեւելքով: Իսկ չորրորդ գետն էլ Եփրատն է:
- 13 Տէրը՝ Աստուած առաւ մարդուն ու գետեղեց նրան եդէմական պարտէզում, որպէսզի այն մշակի ու պահպանի:

*Առաջին դժուարութիւնը գալիս է եբր. «էդէն» - Եդէմ (դրախտ) բառից, որի մասին այլեւայլ կարծիքներ գոյութիւն ունեն. պատմականօրէն եւ աշխարհագրականօրէն որտե՞ղ կարելի է ճշտել նրա դիրքը: Միւս կողմից էլ, երբ ուշադրութեամբ հետեւելու լինենք վերելի տեքստին՝ կը տեսնենք, որ մի տեղ ասում է. «Տէրը՝ Աստուած արեւելեան կողմը, Եդէմում, մի պարտէզ տնկեց», իսկ մի ուրիշ տեղ էլ, 15րդ համարում՝ «Տէրը՝ Աստուած առաւ մարդուն ու գետեղեց նրան եդէմական պարտէզում»: Առաջին դէպքում «Ղէն»-ը հանդէս է գալիս որպէս աշխարհագրականօրէն սահմանելի մի վայր, իսկ երկրորդում՝ որպէս անձնական «պարտէզ» բառի: Այստեղ շատերը ենթադրում են, որ Ծննդոց գրքի եահվէական կոչուող այս աղբիւրում գոյութիւն ունի մի այլ ստորադաս աղբիւր, որն զգալի է դառնում յատկապէս 10-ից մինչեւ 15րդ համարներում:*

*Նախ հարկաւոր է պարզել, թէ ի՞նչ է նշանակում «Ղէն»: Բացի 8րդ համարից, այս բառը Ս. Գրքում ուր էլ պատահում է՝ բնորոշում է մի առան-*

ձին վիճակ՝ կապուած ընդհանրապէս պարտէզի հետ. օրինակ, «գան Դէէն», այսինքն՝ «եղեմական պարտէզ» (Ծննդ. Բ 15, Գ 23, 34: Եզեկիէլ ԼԶ 35) կամ «եղեմ»՝ «Աստծոյ պարտէզ» (Եսայի ԾԱ 3. Եզեկիէլ ԻԸ 13), որը հայերէնում թարգմանուել է՝ «գրախտ Տեառն» կամ «գրախտ Աստուծոյ»: Ոմանք փորձում են այս բառը նոյնացնել ակկադերէն «բիթ- ւադիմի» անուան հետ (Գ. Թագ. ԺԹ 12: Եսայի ԼԷ 12: Եզեկիէլ ԻԷ 23: Ամովս 5)<sup>3)</sup>, որը եփրատ գետի զոյգ ափերին տարածուող շրջանն է ներկայացնում: Ուրիշները «Դէէն»ը նոյնացնում են սումերական «էդիմ» բառին հետ, որը նշանակում է տափաստան կամ անապատ: Սակայն եբրայական լեզուում եւ ուգարիտեան տեքստերում «Դէէն»ը ստացել է բերկրութիւն, երանութիւն, գրքանք կամ բերկրութեան եւ վայելքի երկիր, ինչպէս նաեւ բերկրալից կեանքի իմաստները, այնպէս որ իր նախնական իմաստով «Դէէն»ը, որպէս անապատ, այլեւս գոյութիւն չունի, այն վերածուել է մի չքնաղ ովասիսի եւ դարձել մի «գան- Դէէն», այսինքն՝ մի եղէմական պարտէզ:

Եբրայերէն «գան» բառը Սուրբ Գրքի Եօթանասնից կոչուող թարգմանութիւնն ու գրաբարը «պարտէզ»ի փոխարէն «դրախտ» են թարգմանել՝ ելնելով տեքստի ընդհանուր բովանդակութիւնից: Եօթանասնիցում սոյն բառի յունարէնը «փարադիզոս» է, որը գալիս է հին պարկեսերէն «պարի -դէյգա» բառից (հայերէն՝ պարտէզ) եւ նշանակում է պուրակ, ցանկապատուած հողամաս կամ արքունական պարտէզ:

Նկատի ունենալով, որ եբրայերէն «միկէլէէմ»-«դէպի արեւելք» արտայայտութիւնը աշխարհագրական մի ուղղութիւն է նշում, եւ թէ Ծննդոց Գ 24րդ համարում հանդէս եկող նախադասութիւնը՝ «եղէմական պարտէզի արեւելեան կողմը կանգնեցրեց քերովբէներն ու բոցեղէն սուրը», նոյնպէս աշխարհագրական իմաստով է ներկայանում, բացայայտ է դառնում, որ եահավէական կոչուող այս պատումում գոյութիւն ունի մի երկրորդ աղբիւր, եւ հաւանաբար աւելի հին քան միւսը, որը ձգտում է աշխարհագրականօրէն սահմանել դրախտի վայրը: Նկատելի է նաեւ, որ Տրդ համարում Աստուած ինքն է տնկում պարտէզը, իսկ Յրդ համարում «Աստուած թոյլ է տալիս, որ գետնից ամէն տեսակ ծառեր բուսնեն»:

Եահավէական աղբիւրում համադրուած զոյգ պատումներից մէկը խօսում է Աստծոյ աշխատանքի, կենաց ծառի եւ Եդեմի գետերի մասին, իսկ միւսը՝ մարդու նկատմամբ Աստուծոյ ունեցած հոգատարութեան եւ չարի ու բարի գիտութեան ծառի մասին: Առաջին պատումը փորձում է Եդեմին աշխարհագրական դիրք ապահովել, եւ ըստ ոմանց հաւանական է նկատուում դրախտը հայկական բարձրաւանդակում տեղադրել, իսկ երկրորդը՝ եղէմը ներկայացնում է որպէս դրախտային մի վիճակ մարդու կեանքում: Հեղինակի կողմից շեշտը դրուած է այս երկրորդ պատումի վրայ:

Թէեւ Աստուած բազմաթիւ ծառեր է աճեցնում Եդէմական պարտէզում, սակայն դրանցից յատկապէս երկու ծառեր առանձին են յիշուում. կենաց ծառն ու բարու եւ չարի գիտութեան ծառը:

Վերոյիշեալ Զրդ համարը լեզուական ու ոճային մի այնպիսի խրթին համադրութիւն ունի, որ հարց է ծագում, թէ արդեօք երկու ծառերն էլ պարտէզի կենտրոնում են աճել, արդեօք երկու ծառերն էլ այնքան կարեւոր են, որ շեշտուում է իրենց կենտրոնական դիրքը: Դժուար է պատասխանել այս հարցերին: Հարկ է փոխել հարցադրման կերպը եւ, հետեւելով յայտնի աստուածաբան Կ. Վեստերմանին, պէտք է հետեւեալ ձեւով հարց տալ. մեր քննարկած պատումը Ս. Գրքում նշուած պարտէզի ծառերից ո՞ր մէկի հետ է առնչուում, միայն մէկի՞, թէ՞ երկուսի հետ էլ: Արդարեւ, պատումը զբաղւում է նշուած պարտէզի միայն մէկ ծառով, եւ դա բարու եւ չարի գիտութեան ծառն է:

Ինչ վերաբերում է կենաց ծառին, բացի Զրդ համարից, այն մի անգամ եւս յիշուում է երրորդ գլխի 22-24 համարներում եւ ցոյց է տալիս իր ունեցած յատկութիւնը: Այս ծառն ընդհանրապէս ծանօթ է արեւելեան ժողովուրդների գրոյցներում: «Գիլգամէշ» էպոսում էլ հանդիպում ենք նրան.

Գիլգամէշ, քեզ մի գաղտնիք եմ յայտնելու,  
եւ մի բան եմ քեզ ասելու.  
գոյութիւն ունի մի բոյս՝ նման մի մացառի,  
որի փուշը վարդի փշի նման կը ծակի քո ձեռքը:  
Երբ գտնես դու այդ բոյսը՝  
գտած կը լինես նաեւ կեանքը:  
Նրա անունն է՝ «ծեր մարդուն երիտասարդացնող»,  
հէնց ես ինքս պիտի նաշակեմ նրանից՝  
վերադառնալու համար երիտասարդութեանս<sup>(4)</sup>:

Բոյսն ունի երկու յատկութիւն՝ երիտասարդացնելու եւ կեանքը պահպանելու:

Քանի որ առասպելներում գոյութիւն ունի կենաց ծառը՝ ենթադրուում է, որ Զրդ համարում մի «կենաց ծառ»ի գրոյց եւ մի «բարու եւ չարի գիտութեան ծառ»ի գրոյց միացել են իրար: Սակայն վերջին ծառը Ս. Գրքից դուրս ուրիշ ոչ մի տեղ գոյութիւն չունի, այն հարազատ արտադրանքն է Ծննդոցի հաճվեալական գրչի:

Սակայն նոյնիսկ երբ առասպելներում յիշատակուում է «կենաց ծառ»ը, նոյնիսկ երբ ենթադրուում է, թէ հաճվեալական աղբիւրի հեղինակը ծառերի վերաբերեալ երկու տարբեր գրոյցներ իրար է շաղկապել, այսուամենայնիւ դրանք ոչնչով չեն կարող նուազեցնել Ս. Գրքի հաղորդածի աստուածաբանական արժէքը:

Արդարեւ, Ս. Գրքում «կենաց ծառ»ի մասին գոյութիւն ունեն մի շարք հնաւանդ արտայայտութիւններ, օրինակ՝ «Արդարութեան պտղից բուսնում է կենաց ծառը, անօրէնութիւնը խլում է կեանքի աւիւնը» (Առակք ԺԱ 30, ըստ եբր. բնագրի) կամ «Առկախեալ յոյսը հիւանդացնում է սիրտը, կատարուած ցանկութիւնը սակայն մի կենաց ծառ է» (Առակք ԺԳ 12, ըստ եբր. բնագրի) կամ «Անոյշ լեզուն մի կենաց ծառ է, իսկ վատ լեզուն կոտորում է սիրտը» (Առակք ԺԵ 4, ըստ եբր. բնագրի): Այստեղ, մեր քննարկած պատումում, «կենաց ծառ»ի մասին արուած արտայայտութիւնները բոլորովին տարբերուում

են առասպելներում յիշուածներէից: «Կենաց ծառ»ն այստեղ նկատի ունի Աստուծոյ կողմից շնորհուած կեանքի յագեցումը կամ կեանքի լիութիւնը: Ի՞նչ բան է սակայն կենաց յագեցումը կամ լիութիւնը, անմահութի՞ւնն արդեօք: Արդեօք մարդը սկզբում անմահ էր ստեղծուել. այս մասին դժուար է հաստատ մի բան ասել: Ծննդոց Գ-ի 22րդ համարում «կենաց ծառ»ից ճաշակելը առնչուած է յաւիտենական կեանքի հետ: Յաւիտենականը միայն Աստուած է, եւ եբրայական մտքին բոլորովին խորթ է մարդու յաւիտենական լինելու գաղափարը: Քանի մարդը դեռ մեղք չէր գործել՝ առանց մահուան սարսափի մերձենում էր Աստծոյ յաւիտենականութեանը, սակայն երբ նա մեղանչեց՝ այլեւս կորցրեց յաւիտենականութեան միանալու իր առանձնաշնորհեալ վիճակը եւ ընկաւ մահուան լծի տակ: Մարդկանցից բացառաբար Ենովքն ու Եղիան, ուղղակի, առանց մահ ճաշակելու, մուտք գործեցին Աստծոյ յաւիտենականութիւնից ներս (տե՛ս Ծննդ. Ե 24, Դ Թագ. Բ 11):

«Բարու եւ գիտութեան ծառ»ի մասին գոյութիւն ունեն գտնադան մեկնաբանութիւններ: Ոմանք կարծում են, թէ այս ծառը մարդու հասունութեան հասնելն ու գիտակից դառնալն է խորհրդանշում, ուրիշներն այն առնչում են սեռային հասունութեան կամ սեռային յարաբերութեան հետ, քանի որ նրանից ուտելով՝ բացուեցին նախամարդկանց աչքերը եւ զգացին, թէ մերկ էին ու ամաչեցին իրենց մերկութիւնից: Բացի սրանից, բարու եւ չարի գիտութեան ծառի պտղի ճաշակումով՝ նախամարդկանց խոստացուած էր Աստուծոյ նման լինել, այսինքն՝ սեռային յարաբերութեամբ նրանք պիտի աստուածանային, քանի որ հեթանոս արեւելքում սեռականութիւնը յաճախ Աստուծոյ նման պաշտամունքի առարկայ էր:

Վերոյիշեալ երկու վարկածներն էլ չեն կարող ճիշտ լինել՝ հետեւեալ երկու պատճառներով.

ա. – Եղեմական մարդն արդէն իսկ օժտուած էր ազատ կամքով եւ գիտակցական հասունութեան մակարդակով, դրա լաւագոյն ապացոյցն այն է, որ Աստուած նրա համար օրէնք է դնում (Ծննդ. Բ 16–17): Առանց հասուն գիտակցութեան մարդը չէր կարող իշխելու կարողութիւն ունենալ՝ միւս ստեղծուածներէ վրայ, կամ, ինչպէս յետոյ տեսնում ենք, անուաններ որոշելու թուչնազգիներին ու կենդանիներին:

բ. – Ինչ վերաբերում է սեռային գիտակցութեան, մարդն արդէն իսկ ունէր այդ գիտակցութիւնը, քանի որ սեռերու տարբերութեան պատճառով կարողացաւ ճանաչել իր համար ստեղծուած ընկերը որպէս «Իշա», այսինքն՝ «էգ-մարդ, կին» (Ծննդ. Բ 23): Եբրայերէն «իշ» նշանակում է տղամարդ, իսկ «իշա»՝ կին: Միւս կողմից էլ սեռականութիւնը, իբրեւ սերնդագործելու միջոց, հէնց ինքն Աստծոյ կողմից է սահմանուած: Նախամարդիկ Աստծոյ պատուիրանի գանցառութիւնից յետոյ ամաչեցին ոչ թէ սեռային գիտակցութիւնից, այլ տեսան, թէ սեռային մեղանչում էլ գոյութիւն ունի:

«Բարու եւ չարի գիտութեան ծառ»ն ինքնին արդէն հասկանալի է. այն խորհրդանշում է ճանաչողութեան ընդհանրութիւնը, որը միայն Աստուծուն է

վերապահուած: «Ճանաչողութեան ընդհանրութիւն» նշանակում է՝ բարու կողքին ճանաչել նաեւ չարը, եւ մարդը, ի տարբերութիւն Աստծոյ, պիտի ճանաչէր չարը, միայն այն ժամանակ, երբ հեռանար բարուց՝ զանցառելով Աստծոյ պատուիրանը: Դրանից յետոյ, ինքնաբերաբար, նա չփուած պիտի լինէր չարի հետ: Բարին սկզբնադոյ է, իսկ չարը այդ բարուց հեռացումն է, նրա հակառակ կողմը:

Ուրեմն, մեղանշումի գնով արուած փորձը՝ ձեռք բերելու նման մի ամբողջական գիտակցութիւն, մղելու էր մարդուն մի այնպիսի գոռոզամտութեան, որն այնուհետեւ ինքն իրեն իրաւունք պիտի տար սահմանելու, թէ ո՛րն է բարին կամ ո՛րն է չարը: Այսպիսով, մարդու ենթակայական որոշումը դառնալու էր չափանիշ չարի կամ բարու բնորոշման ու ընկալման, որի հետեւանքով էլ ինչքա՛ն ոճիրներ պիտի գործուէին եւ շարունակուէին են գործուել, քանի որ մարդն իր անձնական շահերից ու նախասիրութիւններէրից թելադրուած՝ իւրովի է մեկնաբանում չարն ու բարին:

Այնքան ժամանակ, որ մարդը Աստծոյ հետ է, բարութեան մէջ է. նրա համար իրերը բարի են եւ կեանքը դրախտային է, որի անբաժան մասն է նաեւ աշխատանքը, քանի որ Աստուած ստեղծեց մարդուն նաեւ «կրկիրը մշակելու» համար: Սակայն, երբ մարդը ոտնակոխում է Աստծոյ պատուիրանը՝ ճանաչում է չարը եւ մերձենում նման: Դրանից յետոյ կեանքը դադարում է դրախտային լինելուց, աշխատանքը դադարում է օրհնութիւն լինելուց, եւ բնութեամբ բարի ստեղծուած իրերը ծառայում են նաեւ որպէս միջոց չարութեան:

## ԴՐԱԽՏԻ ԳԵՏԵՐԸ

Ծննդոց գրքի Բ. գլխի 10րդ համարից յետոյ, յանկարծ, մի միջանկեալ պատում է հանդէս գալիս: Նկարագրոււմ են Եդեմի միջով հոսող գետերը եւ տրոււմ նրանց անունները: Մի խօսքով փորձ է արւում աշխարհագրականօրէն սահմանել Եդեմը: Այս հատուածը իր ոճով եւ բովանդակութեամբ տարբերոււմ է իր նախորդներից եւ նկատոււմ աւելացուած: Հարցական է, թէ եահպտական գրի՞չն է այն վերցրել մի այլ պատումից, թէ՞ հետագայում մի ուրիշ խմբագրի ձեռքով է ներմուծուել:

Սակայն չի կարելի ասել, թէ սոյն հատուածը բոլորովին անկախ է մինչ այդ հաղորդուածից: 10րդ համարի գէթ առաջին մասը՝ «մի գետ էր դուրս գալիս Եդեմից ոռոգելու համար պարտէզը»՝ առանց այլեւայլ կարելի է նկատել 9րդ համարի շարունակութիւնը: Մնացեալ մասը, մինչեւ 15րդ համարը, թէեւ միջանկեալ բնոյթ ունի եւ շատ հաւանական է, որ յետոյ է աւելացուած, այսուամենայնիւ այն գուր տեղը չէ մէջբերուած:

Չորս գետերն են՝ Փիշոն, Գիխոն (Գեհոն), Նիդգէկէլ (Տիգրիս) եւ Փրաթ (Եփրատ):

Եդեմական պարտէզի համար, ինչպէս որեւէ այլ պարտէզի, կարելորը ջուրն է, որովհետեւ այն կեանք է տալիս բուսականութեան եւ անապատը վե-

րածում է կանաչագարդ զեղեցկուժեան: Մեր տեքստում Եղեմում բխող գետը բաժանում է չորս ճիւղերի, բառացի՝ չորս գլուխների: Եբրայական բնագիրը «գլուխներ» (רִאשֵׁי) ասելով՝ նկատի ունի մայր գետի հոսանքից ճիւղաւորուած սկզբնամասերը, այսինքն՝ ակերը:

Եղեմական սոյն գետը իր ճիւղաւորումներով համապատասխանում է այն գետին, որը հանդէս է գալիս Եզեկիէլ մարգարէի փրկութեան ժամանակուայ մասին ունեցած տեսիլքում.

«Եւ ինձ բերեց տաճարի դռան առաջ, եւ հաւ ջուր էր բխում տաճարի մուտքի տակից եւ դէպի արեւելեան կողմը հոսում, որովհետեւ տաճարի առաջամասը նայում էր դէպի արեւելք: ...Երբ ես ետ վերադարձայ՝ տեսայ գետի երկու կողմերը բազմաթիւ ծառեր: Եւ նա ինձ ասաց. այս ջուրը հոսում է դէպի արեւելք, անցնում է Արաբիոյ միջով եւ թափւում ծովի մէջ: ...Ուր որ հասնում է գետը, այնտեղ բոլոր կենդանիներն ու բոլոր նրանք, ովքեր շարժւում են, պիտի ապրեն, եւ ձկներն էլ պիտի շատանան: ...Գետի երկու ափերին աճել էին ամէն տեսակ պտղատու ծառեր. նրանց տերեւները պիտի չթառամեն եւ նրանք երբեք անպտուղ պիտի չնման: Ամէն ամիս նրանք թարմ պտուղներ պիտի բերեն, որովհետեւ գետի ջուրը բխում է սրբավայրից: Նրանց պտուղները կերակուր պիտի լինեն, իսկ տերեւներն էլ դեղի տեղ պիտի ծառայեն» (Եզեկիէլ Խէ 1,7,8,9,12):

Իսկ Չաքարիա մարգարէի գրքում կարդում ենք.

«Այն օրը Երուսաղէմից կենդանի ջուր պիտի բխի, որի մի կէսը դէպի արեւելեան կողմը գտնուող ծովը պիտի հոսի, իսկ միւս կէսն էլ՝ դէպի արեւմտեան կողմը գտնուող ծովը. թէ՛ ամռան եւ թէ՛ գարնան պիտի հոսի այն, եւ Տէրը պիտի թագաւորի ամբողջ երկրի վրայ» (Չաքարիա ԺԴ 8-9):

Համաձայն Կ. Վեստերմանի<sup>(5)</sup>, գետերի չորս թիւը մատնանշում է մի ամբողջութիւն, ինչպէս որ երկրի չորս ծագերը՝ ամբողջ երկիրը: Հետեւաբար, Աստուած իր օրհնութիւնն է բաշխում ամբողջ աշխարհին այնպէս, ինչպէս դրախտից բխող գետը ամբողջ երկիրն է ոռոգում:

Այս է դրախտի գետերի խորհրդանշական իմաստը՝ նոյնիսկ երբ փորձ է արւում աշխարհագրական սահմանում տալ Եղեմին: Գետերից միայն երկուսը աշխարհագրականօրէն սահմանելի են՝ Եփրատն ու Տիգրիսը: Սրանք էլ մեր կարծիքով նշուել են յատուկ նպատակով, որն է ցոյց տալ, թէ Աստուած մարդուն, նրա մեղանշումից յետոյ էլ, շարունակում է մասնակից դարձնել իր բարիքներին, քանի որ աշխարհին ծանօթ յիշեալ գետերը շարունակում են յօգուտ մարդու անդադար հոսել:

Տիգրիս գետը Խիդդէկէլ է կոչուել. այս անուանումը համապատասխանում է պարսկերէն Տիգրա եւ արաբերէն Դիգլատ (Դիջլէ) բառերին, որոնց յունարէն ձեւը Տիգրիս (Τίγρις) է:

Եփրատ գետը կոչուել է Փրաթ, որը նոյնանում է ակկադերէն Փուրաթու եւ յունարէն Ευφρατης անուանումների հետ:

Փիչոնը ոմանք նոյնացնում են Ինդուսի, Գանգէսի կամ էլ Նեղոսի հետ:

Արդի աստուածաբաններն այն կարծիքին են, որ սոյն գետի գոյութիւնը աշխարհագրականօրէն հնարաւոր չէ ապացուցել: Փիշոն անուան արմատը «փուշ» է, որ եբրայեցերէնում նշանակում է ժայթքել, կատաղօրէն հոսել: Ըստ Ս. Գրքի, սոյն գետը անցնում է Խաւիլա<sup>(6)</sup> երկրի միջով: Այս երկրամասի անուան հանդիպում ենք նաեւ Ծննդ. Ժ 7, 29, ԻԵ 18 եւ ա Թագ. ԺԵ 7 Համարներում. այն նկատի ունի Արաբիոյ Հարաւ արեւմտեան շրջանները: Համաձայն Ծննդ. Ժ 7ի՝ այդ երկիրը պատկանում է Քուշի որդիներին: Շատերը ենթադրում են, որ Խաւիլա բառի արմատը «խոլ» է, որը սեմական արեւմտեան ճիւղի բարբառներում աւագ է նշանակում. Արաբիան ունի բազմաթիւ աւագոտներ, այն ծանօթ է նաեւ իբրեւ ոսկու երկիր:

Գիխոնը նոյնացում է Նեղոս գետի հետ: Այս ենթադրական նոյնացման հիմք է ծառայում Քուշաց երկրի յիշատակումը, որի միջով հոսում է սոյն գետը: Քուշաց երկիրը Եթովպիան է, արդէն իսկ գրաբարում Քուշի փոխարէն գրուած է «Երկիրն Եթովպացոց»: Միւս կողմից էլ սակայն Նեղոս գետը ամբողջութեամբ չի անցնում Քուշաց երկրի միջով, եւ սոյն գետը միշտ Նեղոս անունով է յայտնի եղել: Ոմանք այն նոյնացում են նաեւ Կիլիկիոյ Ջիհուն կամ Սիհուն գետի հետ<sup>(7)</sup>: Մեծ հաւանականութեամբ այս գետի «Գիխոն» անունն էլ հնարուած է «Փիշոն»ի նման: Նրա արմատը «գիլ» է, որ նշանակում է դուրս գալ, ցայտել: Այս «Գիխոն» անունն է կրում նաեւ Երուսաղէմի մօտակայքը գտնուող այն աղբիւրը, ուր Սողոմոնը օծուեց թագաւոր (Գ Թագ. Ա 33, 38):

Միւս կողմից էլ, եթէ նոյնիսկ փորձենք սոյն գետերը աշխարհագրականօրէն սահմանել, նորից մատնուելու ենք անել կացութեան, որովհետեւ յիշեալ չորս գետերը նոյն ակունքն ունեն, նրանք ճիւղաւորումներն են դրախտի մէջ հոսող միակ գետի: Հետեւաբար, հնարաւոր պիտի չլինի Երեմիին աշխարհագրական դիրք յատկացնելը:

Քրիստոնէական տեսակէտից սոյն գետերը խորհրդանշում են Աստուծոյ օրհնութեան բաշխումը ամբողջ աշխարհին: Դրա համար էլ Քրիստոսն ասում է. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ եւ խմի: Ով ինձ հաւատում է, — ինչպէս եւ գիրքն է ասում, — նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» (Յովհ. է 37-38): Ահաւասիկ «այստեղ մի անգամ եւս լսում ենք դրախտի կենաց ջրերի մասին եւ միաժամանակ լսում ենք ամբողջական եւ վերջնական պատգամը այս կենաց ջրերի վերաբերեալ, որի համաձայն՝ մարդը պէտք չէ յաւէտ ողբայ մի կորուսեալ դրախտի վրայ եւ ոչ էլ ուխտի գնայ Երուսաղէմ ու սպասի Սիոնի ստորոտում այն օրուան, երբ այլեւս վերականգնուած է տաճարը ու նրա շնմից բխում է աղբիւրը, այլ նա իր հաւատի ճանապարհով պէտք է գնայ Յիսուս Քրիստոսի մօտ, հէնց նրա մօտ, ով եկել է մի անգամ եւ նորից գալու է: ...նրա մօտից է բխում դրախտային կենաց ջուրը»<sup>(8)</sup>:

Թէ ինչ է ասում ս. Օգոստինոսը դրախտի գետերի մասին.

«Ինչ վերաբերում է նշուած գետերին, պիտի ջանամ պարզապէս ցոյց

տալ, որ դրանք իսկական գետեր են: Փոխաբերական նշանակութեամբ կարելի է անուններ դնել այնպիսի բաների, որոնք իրականում գոյութիւն չունեն, որպէս թէ այդ անունումները բացառապէս մէկ այլ իմաստով հանդէս են գալիս: Մինչդեռ այդ գետերը շատ լաւ յայտնի են այն տարածքներում, որոնց միջով հոսում են, ինչպէս նաեւ ծանօթ են մարդկանց մեծամասնութեանը:

Վստահաբար, այդ գետերի անունները նախկինում տարբեր են եղել, ինչպէս որ պատահել է Տիբեր գետի անուան հետ, որը նախապէս կոչուել է Աբուլա: Նոյն ձևով էլ այսօրուան Նեղոսը ունեցել է Գեհովն (Գիխոն) անունը, իսկ Փիչոն կոչուածն էլ բնորոշել է այսօրուան Գանդէսը: Մնացած երկուսը՝ Տիգրիսն ու Եփրատը, պահում են իրենց նախկին անունները:

Աւելին, քանի որ մեզ որոշակիօրէն յայտնի է այս գետերի գոյութիւնը, հետեւաբար, պատշաճ ենք համարում ազդեադարել, որ առաջին հերթին պարտաւոր ենք իրենց իսկական առումով ընկալել նաեւ յարակցուած դէպքերի շուրջ եղած պատումները, եւ ոչ թէ այնպէս դատել՝ որպէս թէ դրանք զուտ այլաբանական զրոյցներ լինեն, այլ այդ դէպքերը իրականում կատարուել են պատմուածի համաձայն՝ առանց բացառելու այն պարագան, որ դրանք մէջբերուելով, կարող են խորհրդանշել նաեւ այլ բան:

Այս մասին անդրադառնալով, ուզում ենք ցոյց տալ, թէ առակաւոր արտայայտութիւնը կարող է հիմնուած լինել որեւէ իրականութեան վրայ, որ միեւնոյն ժամանակ հասկացնել է տալիս, թէ այն հարկաւոր է ընկալել իր զուտ առարկայական իմաստովը, ինչպէս է պարագան Յիսուսի պատմածի այն ճամբորդի մասին, որը Երուսաղէմից իջնում էր Երիքով եւ ընկնում է աւազակների ձեռքը: Արդ, ո՞վ չի դատի եւ յստակօրէն չի հասկանայ, որ սա մի առակ է, եւ թէ ամբողջ նկարագրութիւնը փոխաբերական իմաստ ունի՝ նրանով հանդերձ, որ նշուած երկու քաղաքներն էլ գոյութիւն ունեն մինչեւ այսօր իրենց միեւնոյն վայրում: Գէթ այս նոյն առումով պէտք է նկատի ունենանք դրախտի չորս գետերը՝ նոյնիսկ երբ անհրաժեշտ լինի ընդունել դրախտի մնացեալ զրոյցները իրենց փոխաբերական, ոչ բառացի իմաստովը»<sup>(9)</sup>:

Իսկ ինչ վերաբերում է դրախտի միակ գետից մնացեալ չորս գետերի բխմանը, ս. Օգոստինոսն ասում է, թէ ստորգետնեայ ջրերի միեւնոյն հոսանքները շատ անգամ պատճառ են դառնում երկրի զանազան վայրերում տարբեր ակերի առաջացմանը: Հետեւաբար, դրախտի մայր գետը կարելի է նկատել ստորգետնեայ ջրի այն հոսանքը, որ երկրի տարբեր տեղերից ցայտում էր՝ վերածուելով չորս տարբեր գետերի: Հակառակ այս բոլորի, ըստ ս. Օգոստինոսի, դրախտի մասին եղած ողջ պատումը պէտք է ըմբռնել իր զոյգ իմաստներով՝ իսկական եւ փոխաբերական: Իսկական, քանի որ Ադամն ու Եւան պատմական դէմքեր են, եւ դրա համար էլ նրանց մասին ասում է, թէ ծնունդ տուեցին Կայէնին, Աբէլին եւ Սէթին: Փոխաբերական, քանի որ պատումը հետապնդում է մի որոշ նպատակ, որն է ցոյց տալ գոյութիւն ունեցող բոլոր երեւոյթների սկզբնապատճառը կամ ստեղծուելը միակ արարչի կողմից, ստեղծագործութեան ներդաշնակութիւնն ու իմաստը, մարդու անձնիշխա-

նութիւնն ու ունեցած բացառիկ շնորհը, ապա՝ ապականութեան, չարութեան եւ անկուսակալի գոյավիճակի յայտնուելը:

«Ինձ յայտնի է, — ասում է ս. Օգոստինոսը, — որ շատերը բազմաթիւ արտայայտութիւններ են ունեցել դրախտի մասին: Արդարեւ նրանց ընդհանուր եզրակացութիւնները ամփոփուում են երեք տեսակէտների մէջ: Առաջին տեսակէտի ներկայացուցիչները ուզում են, որ դրախտն ընկալուի միայն իր նիւթական իմաստովը: Միւս տեսակէտի պաշտպանները նրանք են, որ դրախտն ընդունում են հոգեւոր իմաստով: Եւ ի վերջոյ երրորդ տեսակէտն ունեն նրանք, ովքեր դրախտն ընկալում են իր գոյգ առումներով՝ երբեմն նիւթական եւ երբեմն հոգեւոր: Կարճ ասած, ես պիտի խոստովանեմ, որ երրորդ տեսակէտի կողմնակից եմ»<sup>(10)</sup>:

Դրախտը երրորդ երկնքում է

Ոմանք, ինչպէս գնոստիկեանները, ընդունել են բազմաթիւ երկինքների գոյութիւնը, եւ դրախտը տեղադրել են այդ երկինքներից մէկում: Այս առթիւ նրանք վկայակոչել են Պօղոս առաքեալի հետեւեալ արտայայտութիւնը. «Գիտեմ մի մարդու ի Քրիստոս, որ աւելի քան տասնչորս տարի առաջ (թէ մարմնով էր՝ չգիտեմ, եւ թէ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստուած գիտէ) յափշտակուեց մինչեւ երրորդ երկինք: Եւ գիտեմ այդպիսի մի մարդու (թէ մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստուած՝ գիտէ), որ յափշտակուեց մինչեւ դրախտ եւ լսեց անպատուած խօսքեր, որ մարդս չի կարող խօսել» (Բ Կորնթ. ԺԲ 2-4):

Այստեղ, սակայն, Պօղոս առաքեալը ինքն էլ չգիտի, թէ ինչպէս է բարձրացել մինչեւ երրորդ երկինք, մարմնով, թէ՞ բանական հոգով: Միւս կողմից էլ նա չի ասում, թէ դրախտը երրորդ երկինքում է, այլ խօսքը մի ուրիշ յափշտակութեան մասին է եւ այս անգամ դէպի դրախտ:

Եզնիկ Կողբացին, իր «Երժ ազանդոց» գրքում, անդրադառնալով Պօղոս առաքեալի վերոյիշեալ արտայայտութեանը, ասում է. «Պարզ չէ, թէ (առաքեալը) «մինչեւ երրորդ երկինք» ուզում է ասել, թէ՞ «մինչեւ մէկ երկինքի բազմաթիւ մասերից ինչ-որ երրորդ մասը», որովհետեւ յունարէն լեզուով այն խօսքը երկուսին էլ կարող է վերաբերել: Իսկ մանաւանդ որ ասում է առանց յօդի, որը «ն» տառն է, ոչ թէ «մինչեւ երրորդ երկինքն» է ասում, այլ՝ «մինչեւ երրորդն երկինքի»՝ առանց «ն» ասելու: Հետեւաբար այն միտքն է արտայայտում, թէ Պօղոսը յափշտակուեց (ու տարուեց) երկինքի բազմաթիւ մասերից ինչ-որ երրորդ մասը»<sup>(11)</sup>:

Վարդան Արեւելցին (13րդ դար), վկայակոչելով ուրիշների կարծիքը, ասում է, թէ դրախտը «հոգետես», լինելով հանդերձ, գտնուում է ինչ-որ բարձր մի տեղ՝ հաւասար լուսնին եւ արեգակին, սակայն այն կարօտ չէ լոյսի, որովհետեւ Աստուած է նրա լոյսը<sup>(12)</sup>:

Ուրեմն, Աստծոյ լոյսի եւ շնորհի մէջ մնալով՝ մարդն ինքնաբերաբար ինքն իրեն զգում է դրախտային դրութեան մէջ: Դրախտը Աստծոյ մերձաւո-

*ըութիւնն է: Այն անդրտարածքային մի դրութիւն է, ինչպէս նաեւ նախատիպարն է եկեղեցու: Առաջին մարդը ստեղծուեց դրախտից դուրս եւ յետոյ Տիրոջ կողմից դրուեց այնտեղ, իսկ նրա յետնորդները ծնուեցին եւ ծնւում են եկեղեցուց դուրս, սակայն, շնորհիւ մկրտութեան եւ խորհրդի, մուտք են գործում եկեղեցուց ներս, որը նախադուռն է Աստծոյ արքայութեան:*

**ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ**

#### **ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. - Երրայական բնագրում բառացի՝ «չորս գլուխների»:
2. - Երրայեցերէն շոհամ բառի դիմաց գրաբարն ունի՝ «ակն դահանակ»:
3. - Համաձայն գրաբար բնագրի՝ Եսայի Լէ 12ը չունի «էդէն» բառը, իսկ Եգեկիէլ ԻԱ 13ը «էդէն»ի փոխարէ ունի «դէդան կամ դէդանիմ», նմանապէս Ամովս Ա 5ը «բէթ- էդէն»ի փոխարէն ունի «Խառան»:
4. - Տեֆստի գլխաւոր աղբիւրն է՝ “Das Gilgamesch Epos”, Göttingen, 1911, էջ 62-63:
5. - C. Westermann, “Genesis”, էջ 295:
6. - «Խաւիլա»ի փոխարէն գրաբարն ունի Եւիլա կամ Եւիլատա:
7. - Տե՛ս Երեմիա Մեղրեցի, Բառգիրք Հայոց, Երեւան, 1975, էջ 64:
8. - W. Zimmerli, “1. Mose 1-11”, Zürich, 1967, էջ 130-131:
9. - Augustin, “De Genesis ad litteram”, Madrid, 1969, էջ 779-780:
10. - Augustin, նշ. աշխ. էջ 766:
11. - Եզնիկ Կողբացի, «Եդծ աղանդոց», Երեւան, 1970, էջ 161:
12. - Վարդան Արեւելցի, «Յաղագ Եւթն Աւուրց Արարչութեան», Մատենադարան, ձեռագիր նո. 1270, աշխատասիրող՝ Յակոբ Քէօսէեան (մեքենագիր, էջ 5):

# ՀՐԱՇՔԸ

Հրաշքը, «արդիւնք» մըն է, որ առանց Աստուծոյ, անըմբռնելի «առեղծուած» մը կը մնայ գիտութեան առջեւ:

Հրաշք ըսելով կը հասկնանք այն զգալի եղելութիւնը, որ բնութեան ոյժերէն եւ օրէնքներէն վեր է, եւ կամ անոնց հակառակ: Օրինակ՝ նեխաղ մեռելի մը վերակենդանանալը, լայն վէրքի մը վայրկենական բուժումը բնութեան ոյժերէն եւ օրէնքներէն վեր երեւոյթ մըն է:

Ուրեմն իրական հրաշք մը ունենալու համար պէտք է «եղելութիւն» մը, որ գերբնական ըլլայ, եւ անբացատրելի բնութեան ոյժերով:

Հրաշքը բնական օրէնքներէն դուրս արդիւնք մըն է, որուն պատճառը կարելի չէ բնութեան մէջ գտնել:

Հրաշք մը պէտք է ըլլայ նաեւ «զգալի», այսինքն կարելի ըլլայ զգայական փորձառութեամբ անոր գոյութիւնը հաստատել:

Արդեօք իրապէս հրաշք գոյութիւն ունի՞ երկրիս վրայ:

Շատեր յառաջագունէ կը ժխտեն հրաշքի գոյութիւնը: Հրաշքը կ'ըսեն անոնք, բնութեան օրէնքներուն հակառակ է. մինչդեռ բնութեան օրէնքները անփոփոխելի են: Հրաշքով բնութեան օրէնքները կը խանգարուին: Աստուած հրաշք ընելով իր դրած օրէնքներուն դէմ պիտի գործէր, կերպով մը պիտի սրբագրէր իր օրէնքները, որ Աստուծոյ իմաստութեան վայել գործ մը չէ:

Իմաստասէրներէն՝ Սբինոգայի, Հոպսի, Լոքի եւ ուրիշներու համաձայն՝ հրաշքը «զարմանալի» երեւոյթ մըն է, բայց ոչ գերբնական:

Սակայն հակառակ այս ժխտումներուն՝ հրաշքը իրականութիւն մըն է, որուն ստուգութեան վրայ կարելի չէ տարակուսիլ: Այսօր ամէն լուրջ գիտնական կ'ընդունի հրաշքի եղելութիւնը եւ կ'ուզէ բացատրութիւն մը տալ անոր:

Ոչ միայն հին արժանահաւատ եւ ականատես կամ ականջալուր պատմագէտներ կը վկայեն հրաշքներու իրականութեան, այլ նաեւ մեր օրերուն, աշխարհիս ամէն կողմ պարբերաբար հրաշքներ կը պատահին:

Մենք հոս պիտի անդրադառնանք միայն այն հրաշքներուն վրայ, որոնք տեղի կ'ունենան Յրանսայի Պիրենեան լեռներու մէջ գտնուող «Լուրտ» գիւղաքաղաքային աշխարհածանօթ սրբավայրին մէջ:

Անժխտելի իրականութիւն մըն է որ ամէն տարի, աշխարհիս ամէն կողմերէն բազմահազար հիւանդներ խմբովին կ'երթան Լուրտի հրաշագործ աւագանին մէջ լուացուելով իրենց հիւանդութեան բուժում գտնելու:

Աւելցնենք նաեւ որ Լուրտի մէջ մնալուն ընկերութիւն մը գոյութիւն ունի, որուն անդամները քրիստոնէայ, հրեայ եւ անկրօս բժիշկներ են: Այս կազմակերպութեան նպատակն է քննել հոն ժամանող հիւանդներուն խտուրդը, նախ քան իրենց բուժուիլը, յետոյ երկրորդ քննութեան մը ենթարկել բժշկուած հիւանդները եւ անտարակուսելի փաստերով հաստատել անոնց կատարեալ բուժումը:

Օրէնք է որ երբ բժիշկներու այդ յանձնախումբին մէկ անդամն իսկ տարակուսի հիւանդի մը ամբողջական բուժումի մասին, այդ հրաշքը չեղեալ նկատուի:

Արդ, ով որ կը փափաքի, կրնայ երթալ եւ ստուգել այդ կազմակերպութեան դիւանի վկայականներուն մէջ, թէ անթիւ կաղեր ու կոյրեր, համբեր ու խուլեր, անդամալոյծներ, քաղցկեղով եւ ուրիշ ամենազգի հիւանդութիւններով ու վէրքերով տառապող հիւանդներ վայրկենական բուժում գտած են իրենց օխտերուն, ոմանք սրբավայրի աւագանին մէջ լողնալով, ուրիշներ առանց լողանքի, պարզ աղօթքի մը զօրութեամբ:

Բիւրաւոր հրաշքներէն միայն երկու հատ կը դնենք հոս, առնելով գանձնք հաւաստի աղբիւրներէ:

Rouchel անունով տիկին մը գայլախտի (lupus) մորթային հիւանդութենէն կը տառապէր: Գայլախտը՝ սոսկալի եւ դարչահոտ վէրք մը բացած էր անոր դէմքին վրայ: Քիթը, շրթունքները եւ ալտերէն մաս մը փերթ փերթ վար ինկած էին եւ լայնանիստ վէրքը այլանդակած էր անոր դէմքը: Երբ Լուրտ կ'երթայ եւ եկեղեցիին մէջ կ'աղօթէ եռանդով, դէմքին վիրակապը յանկարծ վայր կ'իյնայ եւ երեսը իր առաջուան թարմագեղ առողջութիւնը կը գտնէ վէրքին վայրկենական անյայտացումով:

Pierre de Rudder անունով պիլճիգացի 44 տարեկան գործաւորի մը ձախ սրունքին երկու ոսկորները կը կոտրին արկածի մը հետեւանքով: Բռունցքի մեծութեամբ գարշահոտ վէրք մը կը ձեւանայ, ոսկորէն երեք հարիւրդամեղը փտեցնելով: Օր մը երբ Լուրտի Աստուածածնի նուիրուած քարայրի մը արձանին առջեւ կ'աղօթէ, ակնթարթի մը մէջ փտած եւ կոտրած ոսկորները իրարու կը միանան ու վէրքը կ'աներեւութանայ իսկոյն: Մարդը 23 տարի եւս ապրելէ ետքը կը մեռնի 1908ին:

Լուրտի մէջ կատարուող այս հրաշքներու ստուգութիւնը այլեւս անտարակուսելի է: Սակայն ի՞նչպէս կարելի է բացատրութիւն մը տալ անոնց:

Գիտնականներէն շատեր կ'ըզգեն բնական ոյժերով բացատրել զանոնք:

1) Ոմանք կ'ըսեն թէ Լուրտի մէջ գտնուող աւագանին ջուրը բուժիչ յատկութիւններ ունի:

Սակայն այս կարծիքին սխալ ըլլալը ապացուցուց Ֆիլհոլ ուսուցչապետը, որ քննելով սրբավայրի աւագանին ջուրը այն եզրակացութեան յանգեցաւ, որ այն ջուրը տարբերութիւն չունի լեռներու մէջ գտնուող սովորական միւս ջուրերէն: Նոյն հետեւանքը տուին նաեւ բժիշկ Նոտոնի, Մուկի եւ այլ գիտնականներու քննութիւնները:

Եթէ նոյնիսկ ընդունելու ըլլանք այդ ջուրին բուժիչ զօրութիւնը, անիմանալի կը մնայ սակայն թէ ի՞նչպէս ամէն տեսակ հիւանդութիւններ, օրինակ՝ անդամալուծում, բորոտութիւն, քաղցկեղ, խլութիւն, կուրուութիւն եւ այլն, վայրկենական բուժում կը գտնեն այդ միեւնոյն ջուրին զօրութեամբ:

Անըմբռնելի կը մնայ դարձեալ թէ ինչո՞ւ ամէն բորոտ, կոյր, կաղ կամ խուլ չի բուժուիր, այլ միայն քիչեր: Թող թէ շատ մը հիւանդներ առանց ջու-

րին իսկ մօտենալու, ազօթքի միջոցով կ'առողջանան իրենց բազմազան հիւանդութիւններէն:

Նկատելու է նաեւ որ այդ ջուրին մէջ կը լողանան ամէն տեսակ փոխադրական հիւանդութիւն ունեցող մարդիկ, որոնք աւազան մտնելով կը լեցնեն անոր ջուրը իրենց հիւանդութեան մանրէներով: Կատարուած քննութիւնները ցոյց տուած են որ այդ վնասակար եւ դիւրափոխիկ մանրէներով լի ջուրը խմելով է որ շատեր, փոխանակ նոր հիւանդութիւններով վարակուելու՝ կատարեալ առողջութիւն գտած են իրենց հիւանդութիւններուն:

2) Շատ մը հոգեբան գիտնականներ ուզած են «թելադրանք» (suggestion) վերագրել հրաշքին բուն պատճառը:

Արդարեւ «թելադրանք» միջոցով կարելի եղած է շատ մը հիւանդներ բուժել: «Թելադրանք» ըսելով կը հասկնանք այն ներշնչումը, որով բժիշկ մը հիւանդին մէջ խոր համոզում մը առաջ կը բերէ որ անիկա պիտի բուժուի իր հիւանդութեան: Ահա այս խոր վստահութիւնը կամ հաւատքը բուժիչ դեր մը կը կատարէ շատ անգամ հիւանդին մէջ: Այսօր մեծ գարկ կը արուի մագնիսականութեամբ եւ թելադրանքի միջոցներով բժշկելու հիւանդները: Կամքը մեծ ազդեցութիւն ունի մարդու առողջութեան վրայ, այս իմաստով է որ Կէօթէ ըսած է թէ «Մարդս կ'ապրի այնքան երկար, որքան չմեռնելու հաստատ կամքն ունի»:

Սակայն երկու տեսակ հիւանդութիւններ պէտք է զանազանել. 1) ջրային տկարութեանէ առաջ եկած հիւանդութիւններ եւ 2) գործարանական (organique) խանգարումներէ առաջ եկած հիւանդութիւններ:

Մագնիսական կամ թելադրական միջոցներով կարելի է բուժել միայն ջրային եւ հոգեբանական հիւանդութիւնները, բայց ոչ երբեք լայնաբաց վէրք մը, յառաջացած քաղցկեղ մը, կամ բորոտութիւն մը, կոյր մը կամ կաղ մը եւ այլ գործարանական հիւանդութիւններ:

Լուրտի մէջ կատարուած բուժումները գործարանական հիւանդութիւններ են գլխաւորապէս:

Լուրտի ուխտավայրին մէջ բժշկուած են նաեւ մանուկներ, որոնց բանականութիւնը բացուած չըլլալով, անկարող են թելադրանքի ճամբով բուժուելու: Թելադրանք կարելի է ընել միայն ինելահաս մարդոց:

3) Վերջապէս ուրիշ գիտնականներ տեսնելով վերի բացատրութիւններու անբաւարարութիւնը, հրաշքը կ'ուզեն վերագրել տակաւին մեզի «անծանօթ» եւ «թափուն» ոյժերու:

Մեր գիտութիւնը, կ'ըսեն կարգ մը գիտուններ, հակառակ իր հսկայաքայլ յառաջդիմութեան, տակաւին շատ բան ունի սորվելիք:

Ո՛վ գիտէ թէ ո՞րքան թաքուն ոյժեր, որոնք մեզի անծանօթ են այսօր, վաղը նորանոր գիւտերով սեփականութիւն պիտի դառնան ամէնուն: Զայնասփիւռը, սաւառնակը, հեռապատկերը (television) մէյմէկ հրաշքներ պիտի նկատուէին ասկէ հազար տարիներ առաջ ապրող մարդոց: Այն եղելութիւնները որոնք այսօր գերբնական հրաշքներ կը թուին մեզի, ապագային պիտի

գտնեն իրենց պարզ եւ բնական լուծումը:

Ահա մեր պատասխանը այսպէս տրամաբանողներուն:

Բնական ոչ մէկ ոյժ, ծանօթ թէ անծանօթ, չի կրնար վայրկենական բուժումներ գործել:

Բնական բոլոր ոյժերը ժամանակի ենթակայ են. չեն կրնար ժամանակին իրաւունքները ստնակոխ ընել:

Օրինակով բացատրենք: Առնենք միայն վէրքի մը ամբողջական բուժումը: Միլիոնաւոր նոր խորշեր պէտք են որպէսզի վէրք մը սպիանայ: Կենդանի խորշ մը միայն ձեւանալու համար երկար ժամանակի կը կարօտի: Ապա, խորշ մը, ուրիշ խորշէ մը միայն կը ձեւանայ, որով այս միլիոնաւոր խորշերէն ամէն մէկը պէտք է սպասէ որ իր նախորդ խորշը ձեւանայ եւ հասուննայ:

Ուրեմն պարզ վէրքի մը բուժումը անհրաժեշտօրէն ժամանակի պէտք ունի: Անծանօթ ոյժերը որքան ալ զօրաւոր ըլլան, կարող չեն երբեք վայրկենապէս վէրքի մը բոլոր խորշերը արտադրել:

Բայց հրաշքով եղած բուժումները վայրկենական են, հետեւաբար բնական ոյժերու արդիւնք չեն կրնար ըլլալ, այլ գերբնական:

Ալեքսիս Գաուէլ (1873-1944), վերջին շրջանի լաւագոյն բնախօսներէն մէկը, քննելով Լուրտի մէջ կատարուած հրաշքները, կ'ըսէ. «Բոլոր երկիրներու մէջ, ամէն ժամանակ հաւատացած են հրաշքներու գոյութեան, հիւանդներու աւելի կամ նուազ արագ բուժումներու, որոնք տեղի կ'ունենան ուխտավայրերու եւ որոշ սրբավայրերու մէջ»։ Եւ խօսելով բնական օրէնքներու միջոցով մեկնութիւն տալու մասին, կ'աւելցնէ. բնական օրէնքներու մեկնութիւնը ստէպ կը հերքուի այն քննութիւններէն որ ունինք այսօր. կարեւորագոյն զէպքերը (որոնք կը հերքեն բնական օրէնքներու մեկնութիւնը) հաւաքուած են Bureau médical de Lourdes յանձնախումբէն:

Պահ մը ընդունինք թէ իրապէս տիեզերքի մէջ գտնուող մեզի անծանօթ ոյժերն ըլլան հրաշքին բուն պատճառը:

Արդ, կը հարցնենք մեր հակառակորդներուն. Լուրտի մէջ հրաշքները սկսած են կատարուիլ 1858ին: Այդ անծանօթ ոյժերը ո՞ր էին անկէ առաջ: Եթէ անոնք բնական ոյժեր են, ըսել է թէ կը գտնուին նաեւ Լուրտէն դուրս, ամէն տեղ:

Ուրեմն ինչո՞ւ այդ անծանօթ ոյժերը, ամէն տեղ, նոյնքան յաճախազէպ հրաշքներ չեն գործեր:

Յետոյ, Լուրտի հրաշքները կը կատարուին միշտ աղօթքի մը հետեւանքով, աղօթքի մը՝ որ արդիւնք է այն պարզ ու խոր հաւատքին զոր ունի հիւանդը Աստուծոյ եւ Անոր ամենասուրբ մօր՝ Մարիամ Աստուածածնի վրայ:


Այդ անծանօթ ոյժ պէտք է օժտուած ըլլայ իմացականութեամբ, բարութեամբ եւ ամենակարողութեամբ, որպէսզի լսէ հիւանդներու աղօթքը, բժշկութեան բարիքը շնորհէ անոնց թախանձանքներուն, եւ ամենակարող զօրութեամբ՝ բնութեան օրէնքներէն վեր արդիւնք մը առաջ բերէ:

Մենք այդ իմաստուն, բարի եւ ամենակարող Ոյժը կը կոչենք Աստուած:

*Անոր դոյութիւնը ապացուցնելու համար հարկ չկայ սպասել ապագային.  
Անիկա ամէնուն ծանօթ Աստուածն է: Առանց Անոր, հրաշքը՝ գիտութեան  
լոյսով միայն դիտուած, անլուծելի առեղծուած մը կը մնայ ու պիտի մնայ  
միշտ:*

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

(Գեպի Աղբիւրը Լոյսին)



## Զապել Թագուհի (1219-1252)

Ճշմարիտ քաղաքակրթութիւն զոյուլթիւն չունի ժողովուրդներու մէջ, ուր արարչագործութենէն նշանակուած կինը չունենայ իր արժանաւոր դիրքը, չի դրոշմէ իր կրթիչ եւ ամոքիչ ազդեցութիւնը, թէ առտնին եւ թէ ընկերային կենցաղին վրայ: Եւ առանց տեղեակ ըլլալու ազգիս պատմութեան մէջ հայ կնոջ ունեցած դերին, կրնանք ճանչնալ եւ ցոյց տալ օտարներուն՝ չափը մեր հինաւուրց քաղաքակրթութեան, որով կը պարծենանք որպէս ազգ եւ հաւաքականութիւն:

Նախքան Զապել Թագուհին ներկայացնելը, պէտք է անդրադառնալ, թէ իսկպէս ուշագրաւ ու պատկառելի է հին հայ կնոջ պատկերը, շատ աւելի քան կարելի է երեւակայել մեր ցարդ ունեցած անկատար ծանօթութեամբ: Մեծ եղաւ անոր մասնակցութիւնը, թէ ընտանեկան եւ թէ ընկերային, առաքինական, բարեգործական ու քաղաքական բոլոր ասպարէզներուն մէջ: Մասամբ կը պարտինք մեր տոհմային հնագոյն քաղաքակրթութեան, Աւետարանի լոյսին, որ մանաւանդ յետ հայացման՝ Հինգերորդ դարուն իսկ մաքրեց հեթանոսութեան մոռլյներէն՝ հայ արքունիքը, հայ իշխանաց ու ժողովրդեան յարկերը, մեր ազգային ընդհանուր կենցաղը եւ միանգամայն ազնուացուց հայուհին:

Ռուբինեան առաջին պսակաւորը՝ Լեւոն, երբ վախճանեցաւ 1219ին, իր դահի ժառանգը ձգեց իր դուստրին, Զապելին, որ տակաւին չորս տարեկան մանուկ էր: Զապել իր պատանեկութեան ընթացքին, ժամանակի մեծ բաժինը նուիրած էր մարզական եւ զինուորական հրահանգներու, միշտ յարգելով արքունիքի օրէնքները, որոնք ժամանակի ընթացքին օրինակ հանդիսացան օտար արքունիքներու եւս:

Լեւոն Թագաւորի դասաւորումով, Զապել յանձնած էին Կոստանդին պապեռոնաց թագաւորութեան, մինչեւ 1222 թուականը, անոր հարս դառնալը Փիլիպէին՝ իր եօթ տարեկան հասակին: Միանգամայն պայման կնքուեցաւ, որ ան հայ ծէսով պատարագը ընդունէր եւ պսակեցին Զապելի հետ իբրեւ Թագաւոր Հայոց եւ օծեցին Տարսոնի մէջ:

Կիրակոս Գանձակեցի կը գրէ.- «Երբ Փիլիպ թեւակոխեց իր քսան տարեկանը, հօրը դրդմամբ սկսաւ գոռոզանալ, արհամարել հայ իշխանները, անոնց պաշտօնները յանձնել Անտիօքցիներուն եւ Ռուբինեանց ժողովուրդի հարստութիւնը մասն առ մասն փոխադրել իր հայրենի տունը»: Անշուշտ, հայ աւագանին, արքունիքի նախարարները, չհանդուրժելով այս եղելութիւնը, բերդարգեցին զայն, ուր եւ մեռաւ երկու տարի ետք: Այն ժամանակ Զապելին նոր ամուսին տուին իր հօր քեռիին թոռը՝ Հեթումին, մեծահանդէս պսակելով զայն Տարսոնի մէջ արքայական թագով 1226 թուականին:

Բնականաբար, երիտասարդ Զապելը չկրցաւ հասկնալ քաղաքականու-

թեան լեզուն եւ իր սիրած Փիլիպի վախճանը: Զապէլ Թագուհի բարկացած այս իրողութենէն եւ չուզելով Հեթումի կենակցութիւնը, մեկնեցաւ Սելեւկիա իր մօր Սիպիլի քով եւ չուզեց Տարսոն վերադառնալ: Այն ժամանակ Կոստանդին արքահայրը մեկնեցաւ Սելեւկիա պահանջելու համար թագուհին: Շրջանի ասպետները պահպանելու համար իրենց քաղաքական կապերը Ալայէտին Սուլթանին հետ, բերդն ու թագուհին յանձնեցին անոր եւ Զապէլ Թագուհի համակերպելով վիճակին, դարձաւ եւ նուիրուեցաւ Հեթումին, տասը տարի ընծայելով Լեւոնի գահաժառանգութեան: Այս զոհողութիւնը պատճառ հանդիսացաւ որ Ռուբինեանց փառապանծ գահը փրկուի:

Զապէլ Թագուհի իր գահի հոգեբուն հետ միասին, չանտեսեց մայրական պարտականութիւնները եւ ծնող դարձաւ երեք մանչ գաւակներու եւ հինգ դուստրերու: Աւետիս քահանայ յիշատակագիր 1272ին կը գովէ թագուհին ըստով.– «Իր բոլոր գործաց բարիքներէն անկախ, Հայաստան աշխարհին ժառանգ ձգեց Լեւոն Թագաւորի գահաժառանգութեան այս գաւակները»:

Այդ մայրենի իշխանութեան ընթացքին, արքայորդիներուն եւ մանաւանդ գահաժառանգներուն դաստիարակութեան մէջ, ան կը յանձնէր ազնուականութիւն գործելու մեծագոյն վաստակը, եւ այս պատճառով ալ Ռուբինեանց փառաւոր տոհմը հասաւ իր բարձրութեան՝ Զապէլ Թագուհի բարեպաշտութեամբ եւ առաքինութեամբ: Յետագային, Լեւոն Երկրորդ կը յանձնարարէ յիշել իր հայրը Հեթումը բայց կը յարէ յատուկ խանդադատութեամբ մը «առաւել եւս յիշեցէք Քրիստոսի արժանին, յիշատակի բարեպաշտ եւ աստուածասէր Զապէլ Թագուհին» իր մայրը:

ԺԳ դարուն, զգալի փոփոխութիւն մը մտած է մեր ընկերութեան մէջ: Զապէլ Թագուհի սկսած է յեղաշրջել մեր տոհմային բարքերը, զարգացուցած է հայ հասարակութիւնը որ կը մօտենար հայ տիկնոջ, անոր հետ կամ անոր մասին խօսելու: Սորվեցուցած էր անոր յայտնել իր մեծարանքը՝ չքաղիւր տիտղոսներով, փոխանակ կին, աղջիկ կամ կոյս հասարակ յորժորջումներով: Կիլիկիոյ հայրութիւնը այդ օրերուն ընկերական սերտ կցորդութեան մէջ ըլլալով եւրոպացիներու հետ, կը լսէր եւ կ'ընդօրինակէր նոր տիտղոսներ եւ կը փոխանցէր Հայաստան: Մեր պատմութեան մէջ 1253 թուականին, կը լսենք ուշադրաւ կոչում մը, երբ Հեթում Զապէլի համար կ'ըսէ՝ Կողակիցս Զապէլ Թագուհի:

Այդ նոր լայնմտութեան իբր ցայտուն ապացոյց կարելի է յիշել հետեւեալը.– Կիլիկիոյ գաղափարուած զանազան պատարագամտոյցներու մէջ կը յիշուին մեր կենդանի եւ ննջեցեալ թագաւորները, անոնցմէ մին աւելի առաջ կ'երթայ, խառնելով նոյն պահալաւորաց հետ երկու նշանաւոր թագուհիներ ալ. «Եւս առաւել վասն հանգուցեալ թագաւորացն մերոց՝ Հեթմոյ եւ Լեւոնեանց, եւ թագուհեացն նոցին՝ Զապէլի եւ Կեռանի»: Այս նորոգեալ քաղաքակրթութիւնը տարածուեցաւ Հայաստանի ազնուական դասին մէջ եւս, եւ կրնանք վկայել թէ ասորական ստուերներէն զերծած հայ բարգաւաճեալ հոգին, վերստին սփռեց իր ճառագայթները մեր ազգի պատմութեան մէջ:

Տարեգիրք Կիրիկիոյ մէջ Զապէլ Թագուհիին մասին գրուած է հետեւեալը.– «որ էր իմաստուն եւ համեստ եւ երկիւղած ի Տեառնէ» եւ կը նկարագրուի «գարգարեալ ամենայն առաքիչութեամբ եւ բարեգործութեամբ» Հանդիսանալով մեր մեծագոյն բարեպաշտուհիներէն մէկը: Այդ օրերու մատենագիրներէն չկայ մէկը որ չենբրողէ զայն ու չյայտնէ իր հիացումը, սկսեալ իր զաւկէն՝ Լեւոնէն: Թորոս Ռօսլին զայն կ'անուանէ «զաստուածարեալ թագուհին» եւ «գարբահողի եւ զառաքինաջան եւ ողջախոհ», Գանձակեցին զայն կ'անուանէ «զամենապարկեշտ եւ զառաքինի ... զմարդասէրն եւ զքրիստոսասէր զթագուհին Զապէլ»:

Զապէլ Թագուհի իր բարեգործութեան մէջ կը յիշուի, երբ 1236 թուականին, խաչակրաց Տեւոնեան ասպետներուն կը պարգեւէ Հարուն բերդաքաղաքը իր բոլոր սահմաններով, վանքերով, գիւղերով, լեռներով, հողերով եւ կը հաստատէ հրովարտակով մը, որովհետեւ ան կը տեսնէ, զանոնք «յամենայնի եւ ամենեւին խաչագոգեցեալ եւ զինեալ ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի»:

Թագուհին եւս կառուցող կը յիշուի Սիսի երկու եկեղեցիներու մէջ, Ս. Մարիանէ եւ Բարձր քար կոչուած շրջանին մէջ փոքր կաթուղիկէ մը որ յետագային կը փլի երկարաշարժի հետեւանքով: Ան նաեւ կառուցած է Սիսի հիւանդանոցը, որովհետեւ յատուկ գութ ունեցած է հիւանդներու նկատմամբ, սակայն ըստ Կիրիկեան ժամանակագրքին աւերակ դարձած է 1642 թուականին, դարձեալ երկարաշարժի պատճառով:

Զապէլ Թագուհի յատուկ յարգանք ու սէր ունեցած է ուսումնասիրութիւններու հանդէպ: Ան յարգած է գիրքը, քաջայերած է գրողները եւ մեկեւնաս հանդիսացած է անոնց, որուն մասին կը վկայէ Վահրամ Վարդապետ: Զապէլ Թագուհի ըսած է թէ ուսումնասիրութիւնները ողորմութեան եւ առատ պարգեւի պտուղ են: Անոր մեկեւնասութեան արդիւնքն է Սողոմոնի եւ Յոբայ գրքերը, որոնց մասին կ'ըսէ, Աստուած եւ Աստուածային խոկացէք միշտ, որովհետեւ տրտմեալ սրտերուն սփոփանք կը պատճառէ: Այս մատեանը, կը պահուի Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարանին մէջ:

Հարկաւոր չափով տեսանք Զապէլ Թագուհին, որպէս ճշմարիտ հայ կինը եւ մեր հին քաղաքակրթութեան պատրաստած հարազատ հայուհին: Նկատեցինք զայն ստուգապէս իբր բարոյական բարձրութեան վրայ, որ դարերու ընթացքին իր կտակը մնաց անխախտ, իր բոլոր պայմաններուն, յեղաշրջումներուն, ցնծութեան եւ ցաւերուն մէջ անխտիր:

Արդի հայուհին, որ պիտի կարգայ իր նախնիքներու նկարագիրը, պիտի տեսնէ իր ցեղին եւ սեռին բարձրութիւնը, պիտի հպարտանայ անով, միանգամայն պարտաւոր պիտի ըլլայ պարծենալու իր տոհմային առաքիչութեան, որով մեր ազգը պիտի կարենայ պահպանել իր սեփական նկարագիրը եւ աւանդել զայն աշօրուան եւ հետագայ սերունդներուն:

ՏԱՆԻԱ ՕՀԱՆՆԱՆ

Խօսուած Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ  
Ապրիլ 5, 2006

# Ընտանեկան Կեանքի Պայմանները

Մարդկային կեանքի գոյութեան սկիզբը կը սկսի ընտանիքով, որ կազմուեցաւ Աստուծոյ ձեռքով եւ աստուածադիր օրէնքով: Աստուածաշունչ Մատենի Ծննդոց Ա. Բ. եւ Գ. գլուխներուն մէջ կը կարդանք, որ Աստուած մարդը ստեղծեց իր նմանութեամբ եւ դրաւ զայն Եդեմ կոչուած պարտէզին մէջ, որ կը յորջորջուի՝ Դրախտ: Աստուած տեսաւ որ Ադամ (առաջին մարդը) առանձին պիտի չկրնայ ապրիլ, ուստի խորունկ քուն մը տուաւ անոր եւ կողոսկրներէն մին հանելով, անկէ ստեղծեց Եւան (առաջին կինը) ու տուաւ զայն Ադամին իբր կեանքի ընկեր ու օգնական:

Աստուած օրհնեց Ադամն ու Եւան (առաջին ընտանիքը) եւ ըսաւ. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր եւ տիրեցէք դմա»: Պատուիրեց նաեւ օրինապահ եւ հնազանդ կեանք ապրիլ: «Այս բոլոր ծառերու պտուղներէն կրնաք ուտել, միայն այդ բարւոյ եւ չարի գիտութեան ծառին պտուղէն պիտի չուտէք, եթէ ուտէք՝ պիտի մեռնիք», ըսաւ:

Այս առաջին ընտանիքը սկսաւ վայելիլ իրեն համար պատրաստուած աստուածաշնորհ բարեքները եւ ապրիլ կատարեալ երջանկութեան մէջ: Սակայն շատ չանցած, մարդը իր անհնազանդութեան պատճառով կորսնցուց այդ երջանկութիւնը, վտարուեցաւ դրախտէն ու ինկաւ տառապանքի մէջ, յերկիր մահու: Աստուծոյ դրած միակ օրէնքը՝ հնազանդութիւնն էր, որուն խախտումը պատճառ եղաւ մարդուն անկման ու դժբախտութեան:

Ինչպէս կ'երեւի, Աստուած թէեւ հնազանդութեան օրէնք մը դրաւ, սակայն մարդուն շնորհեց նաեւ ամբողջ երկրին տիրելու իշխանութիւն: Իշխանութիւն մը՝ որուն քով Աստուծոյ հնազանդելու օրէնքին գործադրութիւնը չնչին պարտականութիւն մըն էր:

Բարւոյ եւ չարի գիտութեան ծառին գոյութիւնը պէտք է ընդունիլ առարկայօրէն, որովհետեւ անկէ առաջ Աստուած հրահանգած էր արդէն թէ՛ «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր»: Ուրեմն ամուսնական կեանքի հրամանը տրուած էր նախապէս: Եւ Աստուած նաեւ կատարեալ ազատութիւն տուած էր մարդուն եւ վստահ էր թէ ան բարին ընտրելու եւ չարէն հեռու կենալու իմացական կարողութիւնն ունի: Սակայն կ'ուզէր փորձել զայն իր ազատութեան մէջ, նիւթ ընտրելով այդ ցոյց տուած ծառը, որ թերեւս յար եւ նման էր միւս բազմաթիւ ծառերուն:

Այդ արգիլեալ ծառը, ըստ մեզի, կը խորհրդանշէ Աստուծոյ օրէնքը կամ կամքը: Եւ մարդը այդ օրէնքը անաստելով, կերած եղաւ արգիլուած պտուղէն:

Արդ, ընտանեկան կեանքի պայմաններուն գլուխը՝ վերոյիշեալ աստուածադիր օրէնքն է, հնազանդութիւնը: Եւ այդ օրէնքը հաւասարապէս կ'իշխէ ընտանիքի բոլոր անդամներուն, առն ու կնոջ եւ զաւակաց վրայ. եւ իւրաքանչիւրը պարտաւոր է անոր տրամադրութիւններէն իրեն ինկած բաժինը

կատարել լրիւ, գիտակցութեամբ ու խղճմտօրէն:

Մեր նախնիքներէն ժառանգաբար մեզի հասած հայ քրիստոնէական ընտանիքի օրէնքին տրամադրութիւնները կարելի է խտացնել հետեւեալ բառերու մէջ՝ հաւատք առ Աստուած, սրբութիւն, հաւատարմութիւն, վստահութիւն, գաղտնապահութիւն, ներողամտութիւն, աշխատասիրութիւն, մաքրութիւն, կրթութիւն, մէկզմէկու ծառայելու եւ օգնելու սրտաբուխ կամեցողութիւն, սէր, յարգանք եւ գուրգուրանք:

Հայր մը, որ ընտանիքին գլուխն է եւ նիւթաբարոյական մատակարարութեան պատասխանատուն, իր ջանասիրութեամբ պարտաւոր է հոգալ ընտանիքին նիւթական կարիքները, եւ զգուշանալ իր վաստկած դրամը ընտանիքէն դուրս յուճկէտս ճամբաներով վատնելէ: Ան պարտական է նաեւ իր մաքուր կեանքով, ցուցմունքներով ու խրատներով դաստիարակել իր զաւակները եւ կատարել վերին հսկողի դեր. զգուշանալ նաեւ ընտանեկան յարկէն ներս գայթակղեցուցիչ շարժուձեւ, խօսակցութիւն եւ վէճ ունենալէ: Նման կոչումին գիտակից հայր մը, սէր ու յարգանք կը վայելէ ընտանիքի բոլոր անդամներէն: Իսկ երբ հայր մը, հայհոյիչ է, գինեմով ու կռուազան, իր ժամանակին մեծ մասը հաճոյքի վայրերուն ու սրճարաններուն մէջ անցնող, ընտանիքին ու զաւակներուն հանդէպ անհոգ, չի՛ կրնար յարգանք պարտադրել ու սիրուիլ իր զաւակներէն եւ նաեւ հեռացած կ'ըլլայ հայրական կոչումէն: Գիտակից հայր մը, կը նուիրուի իր կազմած ընտանիքին երջանկութեան ու բարօրութեան համար, հոգածու կ'ըլլայ իր զաւակաց կրթութեան ու ապագային եւ իր երջանկութիւնը կը փնտռէ ընտանեկան յարկին մէջ:

Մայրը, ընտանիքին ներքին պահպան հրեշտակն է: Մօր մը արժանիքին ցայտուն գիծերն են իր նուիրեալ կեանքը եւ զաւակները դաստիարակելու գիտակցութիւնը: Առաջինով ան իր ընտանիքը դրախտի կը վերածէ, իսկ երկրորդով՝ զաւակներուն ապագան կ'ապահովէ:

Գիտակից մայր մը, իմաստութեամբ կը մօտենայ իր զաւակներուն, կ'արթնցնէ անոնց միտքը ամէն մարզի մէջ, թէ՛ ինչպիսի՛ վտանգներ ու փորձութիւններ կրնան ներկայանալ թէ՛ տղուն թէ՛ աղջկան: Եւ այնպէ՛ս մը կը պատրաստէ զանոնք, որ իբր գինեալ պահակ, ուր որ ալ գտնուին եւ ինչպիսի պարագաներ ալ ներկայանան իրենց, գիտեն թէ ինչ դիրք պիտի բռնեն ու պաշտպանեն իրենց անձն ու պատիւը:

Դժբախտաբար ունինք նաեւ մայրեր, որոնց միտք բանին շեղած է իր բուն նպատակէն. մոռցած իրենց տան կարգուսարքը, մաքրութիւնը, զաւակաց եւ ամուսնոյն հոգածութիւնը. եւ ինկած են նորոյթի, հաճոյքի, շարժապատկերի, այցելութիւններու եւ երբեմն ալ՝ բախտախաղի մոլութեանց մէջ: Նման մայրեր, իրենց այս ընթացքով առիթ կուտան, ամուսնոյն դժգոհութեան եւ տան համերաշխութեան խանգարման. եւ չեն իմանար թէ իրենց զաւակները ո՞ւր կ'երթան եւ ի՞նչ կ'ընեն: Երեւակայելի է, թէ՛ այս տեսակ կեանք մը ուր կը հասցնէ ընտանիքը:

Իսկ զաւակները, անոնք փոքր ըլլան, մեծցած կամ ամուսնացած, միշտ

երախտապարտ ոգի պէտք է ունենան իրենց ծնողաց հանդէպ: Որովհետեւ ծնողներ որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքին անսակարկ նիւթաբարոյական գոհողութիւններ յանձն առած, տքնած ու ջանացած են իրենց գաւակաց հոգածութեան, ուսման ու կրթութեան համար, արդարօրօրէն արժանի են անոնց յարգանքին ու սիրոյն, եւ ծերութեան պարագային այլ՝ հոգածութեան:

Այո, «Թողցէ այր զհայր եւ զմայր իւր եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ» հրահանգուած է. բայց ասիկա՝ առանձին տուն եւ ընտանիք կազմելու մասին է, ո՛չ թէ ծնողաց հանդէպ ապերախտ գտնուելու եւ զանոնք լքելու ու մոռնալու համար:

«Յարգէ հայրդ ու մայրդ, որ երկար կեանք ունենան» տասնաբանեայ պատուիրաններէն մէկն է: Երանի՛ այն գաւակներուն, որ իրենց ծնողաց հանդէպ յարգանքի զգացում ու վերաբերմունք ունին. եւ անոնց աղօթքն ու օրհնութիւնը կը ստանան:

Ծնողաց օրհնութիւնը գաւակներու վրայ կը մնայ եօթը պորտ եւ որդւոց որդի:

Արդ, ժողովուրդի մը անուան ու զարգացումը կախում ունին որակաւոր ընտանիքներու շատութենէն. ա՛յն ընտանիքներէն, որոնք կազմուած են կոչումի տէր ու գիտակից ամուսիններէ:

Ահաւասիկ ընտանեկան կեանքի պայմանները, զորս ամփոփեցինք մեր հաւատքի աղբիւր Ս. Աւետարանի ներշնչումով:

Մաղթենք որ այդ ոգիով իմաստաւորուած ընտանիքներ բազմանան մեր ազգին մէջ, եւ որով պայծառանան ազգն ու եկեղեցին:

ԽՈՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ

«Այլեւս երկու չեմ, այլ մէկ մարմին: Արդ ոեւէ մէկը թող չբաժնէ զանոնք՝  
որ Աստուած միացուց» (Մարկ. Ժ. 8):

Օր մը Փարիսեցիները՝ Յիսուսը փորձելու մտադրութեամբ՝ կը մօտենան եւ կը հարցնեն. «Մեր օրէնքին համաձայն մէկը իրաւունք ունի՞ր կինը արձակելու»: Այդ հարցումով կ'ուզէին զինք նեղ կացութեան մատնել: Եթէ համաձայն ըլլար ամուսնալուծման՝ պաշտպանած կ'ըլլար իրենց դատը. իսկ եթէ դէմ արտայայտուէր՝ ժողովուրդը պիտի վշտանար իրմէ: Նազովրեցի Վարդապետին հակառակորդները ամուսնալուծումը կ'ընդունէին իբր օրինական հարց, առանց հոգեւոր առընչութեան: Քրիստոս անշուշտ զիտէր անոնց նենգամտութիւնը. հետեւաբար ուզեց այս առիթը օգտագործել՝ անոնց յայտնելու Աստուծոյ ծրագիրը ամուսնութեան մասին, ու միաժամանակ վարկաբեկելու զիրենք ժողովուրդին ներկայութեան՝ իրենց խստասրտութեան եւ անձնասիրութեան համար:

Յիսուս զինք ծուղակը ձգել ուզողներուն կը հարցնէ. «Մովսէս ի՞նչ օրէնք սահմանեց ձեզի»: «Մովսէս մեզի արտօնութիւն տուաւ բաժանման թուղթ տալու կնոջ եւ արձակելու զայն», կը պատասխանեն: «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի, — կ'ըսէ մեր Տէրը, — սակայն սիիզբէն՝ Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ հետ միանայ, ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Արդ, ոեւէ մէկը թող չբաժնէ զանոնք՝ որ Աստուած միացուց» (Մարկ. Ժ 2-9):

Յիսուս յստակօրէն մեզի կը յայտնէ Աստուծոյ պատուէրը ամուսնութեան մասին: Ամուսնալուծումի մասին կ'ըսէ. «Ըսուած է նաեւ. “Ո՛վ իր կինը կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ”: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. “Ա՛ն որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն”» (Մատթ. Ե. 31, 32): Աստուած Ադամն ու Եւան ստեղծելով՝ առաջին ընտանիքը կազմեց. ուստի կը գուրգուրայ իր ստեղծագործութիւնը եղող ընտանեկան բոյնին վրայ: Հայրական սիրով, համբերութեամբ եւ անսահման բարիքներով միշտ կ'օժանդակէ ընտանիքներուն՝ եթէ անոնք չհեռանան իրմէ: Աստուած իր պարգեւները մարդուն կը շնորհէ ընտանիքին ճամբով, որուն համար յատուկ օրէնքներ սահմանած է: Եթէ ան Տէրոջ հաստատած հիմնական օրէնքները, կանոններն ու սրբութիւնները չպահէ, Աստուծոյ սէրէն զրկուելով կ'ապականի, եւ իր անդամները փոխադարձ յարգանքն ու սէրը կը կորսնցնեն եւ կը կործանին:

Մենք սրբազան պարտաւորութիւններ ունինք մեր ընտանիքին հանդէպ: Ամենասուրբ իրականութիւնը որ կրնայ ըլլալ այս աշխարհի վրայ, ամենէն

նուիրական ժառանգութիւնը որ Աստուծոյ կրնանք ստացած ըլլալ, մեր երջանկութեան աղբիւր եղող ընտանիքն է: Շէնքը, կալուածները կամ փառաւոր վայելքները չեն որ գայն կը կազմեն: Ընտանիքը այն անփակտելի միութիւնն է, որ ամուսին, կին եւ զաւակներ իրարու կը զօղէ աստուածային սուրբ սիրով, որ Արարչին կնիքն է: Սէրը ինքնամատուցում, գուրգուրանք եւ գոհաբերութիւն է. անձը կը կատարելագործէ, բուժիչ եւ դաստիարակիչ է: Առանց անոր՝ ընտանիքը կը քայքայուի, հետեւաբար մեծ ընտանիք մը կազմող ազգն ալ կը կործանի:

Հայր ամենադժուարին պայմաններու մէջ իսկ իր հաւատքէն չէ հրաժարած եւ իր ընտանիքին սրբութիւնը պահած է, մինչեւ անգամ իր կեանքը զոհելով: Այսօր, երբ սփիւռքի տարբեր գաղութներուն մէջ ամէն ազատութիւն եւ առատութիւն կը տիրեն, կը տեսնենք թէ մարդիկ աւելի կը պարպուին ամէն տեսակի ազնիւ նկարագրէ: Այս բոլորին մէջ՝ երիտասարդ սերունդը ընդհանրապէս խելակորոյս վիճակ մը ունի, քանի որ իրեն հարկ եղած ուղղութիւնը տուող առաջնորդ չկայ: Սթափի'նք այս իրավիճակէն եւ վերատեսութեա՛ն ենթարկենք մեր կեանքը, տեսնելու համար թէ ի՛նչ ընթացքի մէջ ենք, որպէսզի կարենանք փրկել փոքր թէ մեծ ընտանիքը, որոնք սրբութիւն են մեզի համար, վերադառնալով Աստուծոյ եւ անոր պատուիրաններուն:

ՎԱՀԱՆ ՔԷՆՅ. ԿՈՍՏԱՆԵԱՆ



## ՃՇՄԱՐԻՏ ԱՂՕԹԱՍԱՅԸ

Պաղեստինի ժողովուրդին առօրեայ կեանքի մէկ երեսէն առնուած «Փարիսեցիին եւ մաքսաւորին առակը» (Ղուկ. ԺԸ. 9-14), իր պարզութեամբ եւ թելադրականութեամբ, կը բացատրէ մարդկային կեանքի երեւոյթներէն մէկը, վեր առնելով խոնարհութեամբ ապրելու եւ համեստութեամբ իր Արարչին արտայայտուելու հարկը: Այդ երեւոյթը՝ սնապարծութեամբ ինքզինք արդարացնելու եւ միւս կողմէ ընկերը վարկաբեկելու զգացումն է: Ամենէն տգեղ ու մարդկային բարոյացուցիչ սկզբունքներէ դատարկ սոյն արարքը կարծես դարերով տիրապետած է մարդոց հոգիներուն վրայ, ու տակաւին կը շարունակէ ներգործել անոնց կեանքին մէջ: Արդէն յստակ կերպով կ'ըսուի թէ այս առակը ուղղուած է անոց՝ որոնք կը պարծենան թէ արդար են, եւ կ'արհամարհեն ուրիշները:

Ինքնարդարացումի նպատակով իր ընկերը դատապարտելը, եւ կամ ինքզինք ուրիշին հետ բաղդատելով իր թերութիւններն ու սխալները ծածկելը՝ մարդկայնական մտածումներ ըլլալէ շատ հեռու են, որոնցմէ ամէն ոք, նա՛ մանաւանդ քրիստոնեայ հաւատացեալը պէտք է խուսափի, որովհետեւ բացարձակ կատարեալն ու արդարը՝ Աստուած ինքն է միայն. մարդ արարածը, որպէս հոգեղէն էակ, միշտ կրնայ թերանալ իր պարտականութեանց եւ գործերուն մէջ, բայց մանաւանդ իր յարաբերական կեանքին մէջ:

Կեանքի մէջ թերեւս ամենէն գեղեցիկ ու յարմարագոյն պահը՝ աղօթքի ժամն է: Առանձնութեան մէջ դէմ յանդիման գտնուելով իր Ստեղծիչին, մարդ կ'անդրադառնայ իր գործերուն ու մեղաւորութեան, եւ ինքնագիտակցութեան գալով կը գղջայ բոլորին համար, հայցելով միեւնոյն ատեն Աստուծոյ ողորմածութիւնն ու գութը: Այս է ճշգրիտ հասկացողութիւնը աղօթքի պահուն, փոխանակ զայն վերածելու ինքնարդարացումի եւ ուրիշները — իր նմանները — արհամարհելու առիթի մը: Այս երեւոյթին է որ կ'անդրադառնայ Յիսուս՝ վերոյիշեալ առակով:

Փարիսեցին, ներկայացուցիչը Հին Ուխտին, աղօթքի կեցած՝ կարծես գեկուցում կու տար իր նախանձախնդիր օրինապահութեան, կատարած ցուցամոլական պարտականութիւններուն եւ ձեւապաշտ ականդապահութեան մասին: Առաւել՝ կը փորձէր, հաւանաբար չքմեղանքի դիտաւորութեամբ, արհամարհել քիչ մը անդին լուռ աղօթող մաքսաւորը, ինքզինք անոր հետ բաղդատելու միամիտ ճիգով մը, խորհելով աւելի՛ արդարանալ: Իսկ վերջինը, իր ամբողջական մեղաւորութեան տակ կքած, Աստուծոյ նայուածքին ու սրբութեան չհանդիպելու մտաւորութեամբ, չէր համարձակէր իր աչքերը գետնէն վերցնել. այլ՝ ինքնագիտակցութեան եւ գղջումի դառն զգացումներով համակուած՝ միայն իր կուրծքը կը ծեծէր ու հեծկտալով կ'ըսէր. «Տէ՛ր, ներէ՛ ինծի՛՝ մեղաւորիս»: Ի տես այս երկու աղօթողներուն, կը հնչէ աստուածային ձայնը՝ որ կ'ըսէ. «Ասիկա աւելի արդարացած իր տունը պիտի երթայ քան փարիսեցին, որովհետեւ ո՛վ որ ճշմարիտ եւ գիտակից համեստութեամբ ինք-

զինք խոնարհեցնէ, Աստուծոյ զթուփեամբ աւելի պիտի բարձրանայ»:

Փարիսեցիին աղօթքը, ինչպէս աւետարանէն կը յայտնուի, ինքն իր հետ ու իրեն համար կատարուած էր: Կարծես տաճար գացած էր իր մասին տեղեկութիւններ տալու Աստուծոյ, այն միամիտ հաւատքով թէ ինչպէս իր առօրեայ կեանքին մէջ կրցած էր խաբել շուրջինները՝ ցուցամոլական արարքներով եւ օրինապահութեամբ, պիտի կարենար նոյնը ընել Աստուծոյ, առանց անդրադառնալու թէ Ան՝ իր ամենագիտութեամբ, ամենակալութեամբ եւ ամենատեսութեամբ՝ կը տեսնէր իր գործերը ու կը կարգար իր մտքին չար խորհուրդները: Իր նախանձախնդիր օրինապահութիւնը նշելով՝ փարիսեցին կը կարծէր ինքզինք առաքինութեամբ զարդարած ըլլալ. փառամոլութիւնն ու ցուցամոլութիւնը այնքան կուրցուցած էին իր հոգիին աչքերը, որ չէր կրնար տեսնել թէ միայն մարդոց երեւնալու համար կատարուած արարողութիւնները, եւ ձեւապաշտական բնոյթով արտաբերուած աղօթքներն ու օրինապահութիւնը՝ առաքինութիւններ չեն կեանքի մէջ: Փարիսեցիին աղօթքը՝ ինքնագովութեան, մեծամտութեան եւ ինքնարդարացումի գեղեցիկ խօսք էր, սակայն զուրկ աւետարանական ու բարոյացուցիչ տարրերէ, մինչ մաքսաւորինը ինքնամոլի, ինքնագիտակից մարդու սրտակեղեմ հառաչ մըն էր, որով կ'ուզէր Աստուծոյ անհուն զթուփեամբ եւ ողորմածութեամբ Երկնքի Արքայութեան արժանանալ: Աղօթքը մաքսաւորին համար այն երջանիկ պահն էր, երբ զգալով իր մեղքերուն ծանրութիւնը, տրտմագին զգացումով կ'աղերսէր Հօր Աստուծոյ ներողամտութիւնը: Նարեկեան բառերով, «իբ սրտի հեծեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակն էր որ կը բարձրացնէր առ Աստուած»:

Ո՛րքան այժմէական եւ իրապաշտ են փարիսեցիին ու մաքսաւորին առակէն մեզի թելադրուող մտածումները: Ներկայիս՝ ամէն վայրկեան կը հանդիպինք փարիսեցիական մեծամտութեամբ եւ ինքնագովութեամբ իրենք զիրենք Աստուծոյ ներկայացնողներու: Այսօր, որեւէ ժամանակ աւելի, կարիք կը զգացուի աւետարանական կեանքի ու մանաւանդ քրիստոնէական ընկերութեան մէջ: Նիւթը, ինքնախաբ փառամոլութիւնն ու փարիսեցիական ցուցամոլութիւնը ա՛յնքան տեղ գտած են մարդկային կեանքին մէջ, որ կարծես դարձած են անոր մասն ու բաժինը: Մարդկութիւնը այժմ աւելի պէտք ունի «մաքսաւորանման» աղօթքներու եւ աղօթողներու, ինքզինք վերստին գտնելու եւ Աստուծոյ նուիրելու համար:

Քրիստոնէական հասկացողութեամբ՝ աղօթքը այն գեղեցկագոյն պահն է, երբ մարդ արարածը՝ դէմ յանդիման գալով իր Արարչին՝ հոգեկան հաղորդակցութեան մէջ կը մտնէ անոր հետ, մէկ կողմէն զգալով Հօր Աստուծոյ անհունութիւնը, իսկ միւս կողմէն ապրելով խեղճութիւնը իր ինչելութեան: Այս հոգեպիճակին մէջ է որ քրիստոնեայ հաւատացեալը կը զգայ Աստուծոյ մեծութիւնը, եւ իրմէ դուրս կը վանէ ամբարտաւանութեան, մեծամտութեան ու հպարտութեան զգացումները: Անոնցմով օրօրուող մարդը չի կրնար աղօթքի նուիրական պահը ապրիլ. այլ խօսքով՝ մեծամիտ, հպարտ ու ամբարտաւան

անձը կարող չէ իսկապէս աղօթել :

*Իսկական աղօթողը երբե՛ք պէտք չէ իր նմանը արհամարհէ: Իբրեւ տկար արարած՝ մարդը անպայմանօրէն կը թերանայ իր պարտականութեանց մէջ: Ուստի աղօթքի պահը՝ ինքզինք ուրիշէն գերիվեր դասելու կամ ենթադրելու առիթը չէ: Փարիսեցին ո՛չ միայն ինքնագոյութեան հիւանդագին այստէն կը տառապէր, այլեւ իր նմանը կ'արհամարհէր եւ ինքզինք շրջապատէն աւելի ընտիր կը համարէր: Մինչդեռ ուրիշին կեանքին ընդմէջէն իր տկարութիւններն ու սխալները տեսնելով, զղջումի եւ ինքնագիտակցութեան զգացումով ծունկի գալով եւ Աստուծոյ գութն ու ողորմածութիւնը հայցելով է որ արդարացումի նամբան կրնանք բռնել :*

*Իրական ու ճշմարիտ աղօթքը՝ հոգեկան հաղորդակցութիւնն է մարդուն եւ իր Արարչին: Այլ բացատրութեամբ, վաւերական աղօթքը դէժ յանդիման դալն է Աստուծոյ, ինչ որ մարդուն զգալ պիտի տայ իր խեղճութիւնն ու տկարութիւնը Ստեղծիչին անհունութեան առջեւ, Նարեկեան բառերով՝ «ոչինչէն ամէն ինչ ստեղծող, փառաւորուած, անքնին, անհեղ, անարկու... անբովանդակելի, անմերձենալի ... անսկիզբ, անժամանակ» Աստուծոյ առջեւ: Կարեւորը այն չէ թէ մարդ ո՛րքան բարի է իր նմանին համեմատութեամբ, այլ գերագոյն բարութեան՝ Աստուծոյ բաղդատմամբ: Որպէսզի չտարուինք մենք մեզ արդարացնելու սնապարծ եւ ունայն զգացումէն, պահ մը մեր աչքին առջեւ բերե՛նք Քրիստոսի կեանքին սքանչելի օրինակը: Այն ատեն մե՛նք ալ վստահաբար մաքսաւորին հետ պիտի կրկնենք. «Տէ՛ր, ներէ՛ ինձի՝ մեղաւորիս»: Իրական մեծութեան եւ հոգիի վեհութեան հասնելու միակ ձեւն ու նամբան՝ մեր անձը քննելն է յարաբերաբար տիեզերքի Արարչին, որպէսզի կարենանք տեսնել իրականութիւնը իր էութեան: Անկեղծ, կենդանի հաւատոքով եւ ինքնաքննութեամբ է որ մարդ, մանաւանդ քրիստոնեան, իր աղօթքները պիտի ըսէ Նարեկացիին հետ. «արդ, քեզի՛ անկ է կեանք պարգեւել հոգիով մեռածիս, կենդանի Աստուծոյ Որդի, եւ անոխակալութեամբ գալ օգնել դատապարտեալիս: Ամէն բանի մէջ փա՛նք քեզի. ամէն»:*

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ